



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ի Ա Ր Ա Ջ Ա Ն

ՈՐԱՆՏԻՆԻՆ

ԳԻՏՑԱԾ ԸԼԼԱՆ!

ԳԻԱԿԻ ՄԸ ՇՈՒԲՋԸ

“ԲԱՇԱՒԵԱՆ ԵՐԵՎՈՅԹԻ”

1006
27579

Ա. ԳՐԱԿ

ՅՈՒՆԿՈՒՐ 1001



ՓԱՐԻՋ
ՀԱՄԱՎՈՐՈՒՄԻՆԻ ՏՈՒՐԵՆ
1901

891-99-09

Մ-50

ւջ

19 NOV 2011

ԽԱՐԱԶԱՆ

ԳԻՏՑԱԾ ԸԼԼԱՆ

ԽԱՐԱԶԱՆԸ կը հիմնուի՝ սակն կաշխատողուսն ու մա-
նաւանդ սպագրուած բուդրի վաճառականներուն սեւարգու
քօնթուօլէն գերծ՝ սնկախօրէն, իրոխսսքար ու հօրապէս
գրեղու հաւար:

ԽԱՐԱԶԱՆ՝ եապէս ու անբողջապէս պայքարի օղկան
ւը՝ չպիտի ունենայ շահախնդիր նկատուներ, շիտի վերա-
պահուներ, վախկոն ու վաս զգուշաւորութիւններ, պգտիկ
եաական հաշիւներ: Բաղիէնի բարոյականը չպիտի կրնայ եր-
բիք ազդել սնոր իր դարաւոր խուժողուծ հասարակ տեղի-
ներուն պատկանակը. — «սնձնականութիւն», «սկզբունքի
խնդիր», «չախազանցութիւն», «կողմնակցութիւն», «կանխա-
ւսութիւն» եւ ուրիշ գրիչ բոնող ծառայի դեռ շաս ւը ստուկ
սոխեսութիւններ զիս չպիտի ուշացնեն արդարութեան ու մաք-
րագործունի ձաւքուն մեջ: Սակն սնկալ ու հոս մեկը մեր-
կացնել խարազանեղու հաւար, սնոր խաղաբիւնը ծաւկող
միւնջեր յեթին բուրջի կտորը պիտի հանել վրայէն: Պեք է որ
երեւան ժողովարդիկ պոստ աչերուն իր մորթին վախած, իր
արիւնը սպախանեղով սպրոդ տիղղի ու նեխարեան հոգիները,
ու սնոնց գարշահոն տեւն է որ պիտի ատրապեղեք ազգային
սոսախնութիւններու խախտոս հարսարմութիւնը:

ԽԱՐԱԶԱՆ պիտի երբայ գտնել՝ կրակին սոցեր իր վայ-
րագ յղիացունիկն մեջ փոռած պրոժուան ու սնոր քշացող

մարտիրոսներ պիտի խանգարե: Մոռոք ու ժանգոսած խղճներ-
սանկներու գիշերախառն մղձառանջը պիտի ըլլայ՝ աղփասիկ
անեծքը, անօրութեան գայրոյքը, արիւնիկ բողոքը ու քայ-
քայուն զայնասուններ քափելով անոնց կապարե քունիկ մեջ:

ՍԱՐԳՍՏ պիտի մահուան յօղանջը զարնե մեր ազ-
գային Տիւրքիայի վրայ դեռ կանգուն մնայ յանառոյ բո-
լոր անկեքեք ու խարուսիկ առանդալիպերուն: Բոլոր անի-
րաւ փառքերը, բոլոր անարդարանայի համբաւները, բոլոր
կոյր ու անձեռնխելի պաշտանուկները խորսակելու, բոլոր
ւսախօս հովիւները, բոլոր կեղծ իշխանները, բոլոր անգուք
բարերարները խայտառակելու պիտի նուիրուի **ՍԱՐԳՍՏ**ը:

ՍԱՐԳՍՏ պիտի անխնայ հաշածե բոլոր Կեղծիքի ար-
հեստարները, բոլոր սիրուած, յարգուած խաչագողները,
աւրբսիսի միամիտ ու անեկի բնագրները շահագործող բոլոր
խանդակաւ աւանակները. ու մտքիկ մեջ պահուրտող բոլոր
նեղագութեան ու սարսակի նգորուկները օրուան յոյսիկ պիտի
մտնեն:

Ու վերջապէս բոլոր աներես ինաստակներուն, բոլոր նե-
ղացուցիչ ու սուս չեղող միջակներուն, բոլոր ոսքի սակիկ-
կող ու ճարտայ գոցող անսակելի սիրացուկներուն; բոլոր վերք
ու չհանակերպող **ՍԱՐԳՍՏ**ներուն հետապնդող ու անողոք պա-
տահար պիտի ըլլայ **ՍԱՐԳՍՏ**ը:

Թո՛ղ գիտցած ըլլան . . . :

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՅԵՒԵԱՆ

Ա.

ԴԻԱԿԻ ՄԸ ՇՈՒՐՁԸ

Անանխիտ մեծանուն իմբարդապետը, երկու տարուան
սգաւոր լուծեմէն մը ետք, ժամանակը եկած համարեր է,
վերջապէս, ձեռքովս սպաննուած իր գրականութեան
գիւղը ողջնցնել փորձելու:

Ո՛րչափ կը հասկնամ զինքը, ո՛րչափ բնական ու մարդ-
կային կը գտնամ իր յուսահատ ու ողեսպառ դալա-
րուկները՝ իր անդառնալիօրէն ընկղմած «Թուղթի փառք»ը
փրկելու ու վերստին տիրանալու մեր գրասէր հասարակու-
թեան—համողուած տիրացուներու մեր խանդավառ ամբո-
խին—ատենէ մը ի վեր ա՛լ վարանտ հաճութեանը ու
խախտած, կասկածոտ հիացումին: Ասիկա ա՛յնչափ սրտա-
ռուչ է ու աղերսարկու՝ որ վայրկեան մը մտածեցի հրաժա-
րիլ պատին վրայ խելայեղօրէն բզզացող ճանճ մը ձգմե-
լու այպանական ձիգէն, լուռ մնալ ու ձգել որ այդ տը-
խուր տղան պատրական յաղթանակի մը միտիթարող, սպիա-
րար հեշտութիւնը ապրի ատեն մըն ալ: Ու հաւատացէ՛ք
որ մէկէ աւելի պատճառներ — զորս ձեզի կը թողում գու-
շակել— կը համոզէին զիս հրճուել այս գլխառատ ու բարձ-
րօրէն մարդասիրական լուծեան մէջ . . . :

Դժբաղդարար — իրեն համար — Ա. Զօպանեան անխու-
հեմ յանդգնութիւնը ուզեր է ունենալ իր յետահայեաց ձա-
խողակ յարձակումին մէջ՝ զուտ գրական բանակալի մը
հարկագրած սահմաններէն անդին անցնելու եւ իր անկա-
րող ու նենգաւոր հակառակորդի — ու այս բառը շատ կը
պատուէ զինքը — ամօթալի շուարումին մէջ՝ ցած ու արխ-
մար եկնիկիւսախօսներ ընելու իմ սոսկական անձիւս գէմ:
Ասկից դատ, բուն խնդիրը — որ սակայն պատրուակ մըն է

լով — ներկայացնելու եզանակին մէջ գրած իր ստեղծու ու կեղծելու շնական «բարի կամքը» գլխու պտոյտ տուող համեմատութիւններու կը հասնի ու անկարելի կ'ընէ իմ կողմէս ո եւ է ներողամիտ կամէութիւն :

Բայց անմիջապէս ըսեմ ձեզի թէ ես չպիտի գործածեմ իրեն գէմ — թէեւ ասիկա արգարացի պաշտպանութիւն մը պիտի ըլլար այս պարագային — անձնական տարամերժ ու քինայոյզ յարձակումի մը թունաւոր ու անողոր զէնքերը : Ատոր համար դեռ բաւական չար չեմ զգար ինքզինքս այդ ողբալի մարդուկին գէմ, կամ՝ գուցէ չափազանց վայրագ՝ կ'ուզեմ նուրբ վայելքն ունենալ իր երկու տարիէ ի վեր դողանար սպասած վերջնական ու ամբողջական գլխատումը այս անգամ ալ յետաձգած ըլլալու : Յետոյ, իրաւցնէ՛, ասիկա քիչ մը շատ գիւրբին շի՞ պիտի ըլլար ինծի համար, — օգտուի՛ իմ խորունկ ու «բազմակողմանի» — բառ մը որուն կ'ապաստանի խեղճ Արփիարը ամէն անգամ որ իր պղտիկ պաշտպանին յօդուածները ուրակելու հարկին մէջ գտնուի — օգտուի՛ Ա. Զօպանեան էակին իմ խորունկ ու բազմակողմանի ծանօթութենէն՝ խեղդելու համար զայն իր ֆիզիքական ու բարոյական անձէն գուրբ պոռթկացող անսպառ ու թանձրախուռն ծիծաղելիութեանը մէջ : Ասիկա ինքն ալ յուսահատօրէն գիտէ ու չի քաշուի խոստովանելէ : Իր անվիճելի հեղինակութեան կը գիմեմ հոս վայրկեան մը : Անանիսի մեծանունը կ'մտադրապետը սա կորովի ու սրտայոյզ խօսքը կ'ընէր մեր վերջնական խորումին առթիւ — Վաղուան Զայնի գիւցաղնական օրերուն — ինծի գրած իր անմոռանալի նամակներէն մէկուն մէջ . — «Լաւագոյն կ'ընես բոլոր ըսելիքներդ յօդուածիդ պահելով, կամ յօդուածներուդ, որովհետեւ դուն պէտք է գրես ամենքն ալ, եւ ոչ ոք քեռէ աղէկ կրնայ գրել ատիկա, հոտ հպարտ եղիք, իրաւունք ունիս . . . » : Խեղճ տղան ճարահատած՝ ա՛լ ամէն բան աչքը առեր էր ու ճգնաժամային համակերպութեան մը մէջ կ'ըստպատէր կոր որ Շայլօքէն անգութօրէն երգուած «Յորեք» ինքովիկը տեղաւորեմ գինքը : Հեշտալիօրէն յուսախար ե-

ղաւ : Մտքէս անգամ չանցուցի ուսիկ ասելութեան այդ գիւրբին ճիգը : Վաղուան Զայնի մէջ Ա. Զօպանեանի անձին գէմ աող մը չստորագրեցի : Ու այսօր ալ, հակառակ իր լիրբ ու նենգածէտ գրգռումին, հակառակ այն այլանդակ, կնճոռոտ ու անխոստովանելի պարագաներուն որոնց մէջ — որոնցմէ օգտուելով — Ա. Զօպանեան իր հոգիէն փրցուցած պատառ մը տիղմը կը նետէ կոնակիս՝ չպիտի զիջանիմ ես իրմէ «վրէժ լուծելու» գնուձ ջանքին ու անխնայ, անհրաժեշտ բացատրութեամբ մը պիտի շատանամ : Ասիկա չէի՞ք սպասեր իմ կողմէս ու քիչ մը շա՞տ զմայլելի եմ արգեօք . . . : Բայց բոլորովին անկեղծ ըլլալու համար ըսեմ որ — գուեա դրական տեսակէտով մը — մե՛զք ալ պիտի ըլլար աս, որովհետեւ այդ ցաւագին տղան նիւթը կրնայ հայթայթել ինծի տարօրինապէս վրդովիչ ու մարդկային վէպի մը զոր թերեւս փորձուիմ գրել յառաջիկային, ու այն ատեն պիտի չարժէք անշուշտ որ հոյակապ եռեկողրանի մը ունայն հաճոյքին համար պղծած ըլլայի թանկագին տօքիւմաններու գանձս այդ մէկհատիկ ու չըլլալի՞ք տիպարին վրայ որ՝ կռօթեալին մէջ քնարերգական ցնորատու խոյանքներու հասնող ու անարգութեան մէջ արգահատանք հրաւիրող իր անլուր ու հիւանդագին խառնուածքովը՝ պիտի յաճախէր ու շուարեցնէր մարդկութեան ցաւագարներուն ու ինկածներուն մեծհոգի խուզարկուն — իմ պաշտած վարպետս Միտլոսն իսկ :

Ըսի թէ «Բաշալեան Երեկոյթը» պատրուակ մըն էր միայն Անանիսի խելացի կ'մտադրապետին իր հետս ունեցած մէկ բաւական հին հաշիւը կարգադրել փորձելու : Ասիկա հասկնալու համար թերեւս ոմանք յստակ բացատրութեան մը պէտք ունենան : Ահաւասի՛կ :

Ա. Զօպանեան, իրեն յատուկ միամիտ խորամանկութեամբ մը, «Նոր Կեանքի բարիգեան թղթակցին» — որ Բաշալեանն է պարզապէս — «պակասաւոր ու սքօղեալ նկարա-

գրութենէն» է որ բորբոքած կ'ուզէ երեւալ: Իրա՛ւ որ սքանչելի է ասիկա: Այդ հակիրճ թղթակցութիւնը զոր Բաշալեան գրած էր իր — մանաւանդ այս միջոցիս — թանկագին բարեկամը չգիտամակելու երկիւղած զգուշաւորութեամբ մը՝ ինծի համար այնչափ վերաւորիչ էր, որչափ զգուշական՝ Ա. Զօպանեանին: Հոս, հազիւ քանի մը անիմաստ ու անգոյն բառերով հաճեր էր Բաշալեան յիշատակել իրեն ու իր գործին վրայ կարգացած բանախօսութիւնս — որ սակայն երեկոյթին է՛ն կարեւոր անցքն էր — ու երանելի հաճոյակատարութեամբ մը յամեցեր էր մեկնաբանելու շնորհալի նախադահին թոթոված քանի մը անկասկած ու նախանձաբեկ խօսքերը: Ասիկա դիտել տուի իրեն, առանց եղբերդական կշտամբանքներու, պազ համոզումի անտարբերութեամբ մը: Բաշալեան պատասխանեց ինծի այն նշանակալից ու ամբարիշտ ժպիտներէն մէկովը որոնք այնքան վայելչօրէն կը ծամածուեն իր համակրելի դէմքը: Եւ որովհետեւ հալէ հասկցող մարդ մըն եմ՝ չը պնդեցի:

Նոր Կեանքի Յուլիս 1ի թիւը ինծի ամէն բան բացատրեց: Արփիարին «Ժամանակակից Դէմքեր» խորագրին տակ Ա. Զօպանեանի նուիրած յօդուածը պէտք եղածէն աւելի շինիչ էր ինծի համար: Այդ հերարձակ ու «վրան բաց» ներբողականը ժամանակին կը հասնէր՝ տարտամօրէն վտանգուած շահխնդիր բարեկամութիւն մը ամբապնդելու ու ազահովելու մանաւանդ քմահաճ ու յեղյեղուկ թիկնապահի մը անստոյգ օժանդակութիւնը: Ամենուզ ծանօթ հրակէզ խնդրի մը տարամբժ մտահոգութիւններուն մէջ գրուած այդ էջը անգիտակցութեան ու կեղծիքի այն գարշահոտ հրաշակերտներէն է որոնք կը մնան հրապարակագրի մը գործին մէջ ու զայն կը յատկանշեն իրենց անարգուն կարագրին ջախջախիչ ուժգնութեամբը:

Անշուշտ պատրանքներ չեմ ունեցած Արփիարին ուղղամտութեանը մասին ու յայտնութիւն մը չեղաւ ինծի այս անգամ անկեղծութեան իր ցաւալի անկարողութիւնը: Բայց այդ քիչ խղճահար հրապարակագիրը մեր վերջին քառորդ դարու ազգային բարոյական կեանքը վարել ստանձ-

նող պարկեշտունակ ոչնչութիւններու ու «նկարագրի տէր» անբաններու անստգիւտ բաղմութեան մէջ, ամենէն աւելի շարժում առաջ բերողն է եղած ու է՛ն հզօր, է՛ն խանդալաւ գործաւորը՝ արմատացած նախապաշարունակներէ, աւանդական դձձութիւններէ ու ցեղային հինաւուրց դուհիկ բարքերէ մեր մասնակի ազատագրումին: Ասոր՝ ու դեռ ուրիշ բոլորովին մտաւորական կարգի պատճառներու համար անկարելի եղած էր ինծի չհամակրել Արփիարին ու իր բիրտ հակասութիւններով ու երբեմն կեղծիքի անհանդուրժելի հոտով մը ապականուած գործունէութիւնը աւելի ու այլապէս շահեկան ու արգաւանդ երեւցած է ինծի քան միւսներուն պայծառ անկարողութիւնը ու առաքինի տխմարութիւնը: Եւ երբ տեսայ կենդանիներու խուժան մը որ վայրագօրէն կը քարկոծէր այդ միս միտակ մարդը, ոճիրի մը համար զոր չէր կրնար գործած ըլլալ ան՝ պաշտպանեցի զինքը — դեռ նոր հրապարակ ելած — իմ երիտասարդ զայրոյթիս բոլոր խանդոտ ուժգնութեամբը ու աղնիւ հաւատքի մը բովանդակ անվերապահ ու չհաշուող անկեղծութեամբը: Վաղը նորէն պիտի պաշտպանեմ զինքը, եթէ ատոր պէտքը զգամ, անձնական գոհացումի մը համար միայն. . . առանց իրմէ երախտագիտական նամակներ ստանալու փառասիրութեանը: Ու գուցէ զանցանելի օգնութիւն մը չըլլայ իրեն ասիկա, որովհետեւ հասկըցած է հարկաւ այս միջոցիս թանձր ունայնութիւնը իր Անահիտի թիզ մը հսկային վրայ գրած յոյսերուն ու գիտնալու է որ իր Բարիզի դիւցազնական բարեկամը, նոյն իսկ Նոր Կեանքի անակնկալ — կամ ապսպրուած — աստուածացումէն վերջը, հոգիի ի՛նչ տեսակ միջին ցածութեամբ մը լնանեց զինքը — անխոստովանելի ակնկալութիւններով — Դաշնակցական պետերէն Կարօին: Ու խեղճ միամիտ ծերուկ՝ եթէ կը կարծէ թէ Նոր Կեանքը Ա. Զօպանեանի փառաւորումին ի սպաս դնելով անգրգուելի հաւատարմութիւն մը ու չյոգնող անձնութիւն մը ապահոված կ'ըլլայ ինքզինքին: Ասիկա շատ ախուր ու անհունօրէն ծիծաղելի պիտի ըլլար: Ու ինչ աւելի աղէտաւոր բան իր պաշտ-

պանութեանը քան սա պարզ հաստատումը՝ — Արփիար մը որ պիտի կ'ունենայ փորի վրայ տափակնալու Ա. Զօպանեանի մը առջեւ, անոր աջակցութիւնը իր գատին ապահովելու համար ու Ա. Զօպանեան մը որ իր ազուշութեան բարձունքէն՝ աչքերը կիսախուփ՝ կ'ընդունի Արփիարի մը խնկարկութիւնները ու իր նենգութեան խաւարչտին ցածութենէն անոր կոնակին կը դաւէ: Ու ասիկա երէկուան իրողութիւնը չէ՛: Արփիարն ու Բաշալեանը կան միայն որ Ա. Զօպանեանի անձնուրաց ու ազնուական մատնութիւնները չեն իմանար՝ յանկարծօրէն խուլ կտրած, չեն ըմբռներ՝ ուղղած ու բռնի անհասկացողութեամբ մը, կամ կ'իմանան, կը հասկնան ու . . . կը ներեմ գերմարդկային հեղութեամբ մը: Ասիկա երէկուան իրողութիւնը չէ՛: — « L'Arménie » ի անկարելի Պարոն Մինասը, քանի մը ամիս առաջ, սա խորունկ ու թելադրական խօսքը կ'ընէր ինծի— է՛ն թելադրական ու է՛ն խորունկ խօսքը որ երբէք ելած ըլլայ այդ անձատելի, անհաւատալի ցաւազարին բերնէն:

— Անցած օր Արշակը տեսայ . . . Արփիարին դէմ գրածներու վրայ խօսեցաւ ինծի ու ըսաւ որ՝ պէ՛տք է գրեմ, պէ՛տք է մէջտեղ հանեմ գիտցածներս, թէ անոնք ճիշտ կը թուէին կոր իրեն ու չէր տեսնար կոր ինքը թէ ինչպէս անոնց տակէն պիտի ելլար Արփիար . . . :

Ու ջինջ յափշտակութեան վսեմի հասնող չեշտով մը կ'աւելցնէր Պարոն Մինաս .

— Ի՛նչ քօնափ բարեկամներ են . . .

Խորին լուութեան մէջ իրարու երես նայեցանք վայրկեան մը, ու ասիկա թերեւս աւելի տեւէր եթէ իր աչքերուն անդնդային պարապը գլխու պտոյտ չի տար ինծի: Աթոս բռնեցի վար չիյնալու համար ու մեքենաբար կըրկնեցի:

— Այո՛, Պարոն Մինաս, ի՛նչ քօնափ բարեկամներ . . .

Ու հոս անմիջապէս պէտք է ձեզի ըսեմ թէ իմ ու Ա. Զօպանեանի բարեկամական յարաբերութեանց վերջնական խզումին սկզբնապատճառը Արփիար խնդրին մէջ այդ պըղտիկ կեղծաւորին առած Արդարութեան ախոյեանի հովերն:

եղան: Վաղուան Զայնի Բ. թիւին՝ Խրոս մը վերնագրով յօդուածիս մէջ անցողակի հարուածով մը մատնանիչ կ'ընէի Իրաւունքի Զօլային Արփիարը պաշտպանելու ողորմելի եղանակը: Ստորին վերապահումներով ու եսական գեանագարջ զգուշաւորութիւններով գրուած այդ յօդուածներուն մէջ Ա. Զօպանեան կը պահանջէր Արփիարի զրպարտիչներէն իրենց այնքան ատեն սպառնացած սօքիւմանները մէջտեղ հանել: Ասիկա պարզապէս վիրաւորիչ կը գտնայի ես Արփիարին համար ու կը գրէի. — « Չէ՛, մենք նախատինքը չպիտի ընենք Արփիարին իր մատնութեան փաստերուն սպասելու, պիղծ տարակոյս մը տեսնալով նոյնիսկ սկեպտիկ սպասումի մը մէջ»: Ասիկա չէր կըցեր կուլ տալ մեծ Իրաւարարը որ քանի մը օր վերջը տասը երես նամակով մը ինծի պատմութիւնը կ'ընէր իր Արփիարին շնորհած պաշտպանութեանը, Պօլէն մինչեւ Վառնա: Մարդկային անդիտակից տխմարութեան ու երջանիկ ունայնամտութեան հազուագիւտ սօքիւման մը՝ այդ նամակը զոր ամբողջութեամբ պիտի ուզէի հոս արտաբերել եթէ տեղս հաշուուած չըլլար եւ ուր Արփիար առջեւիդ պիտի դար, իր՝ պաշտպանալի ողբալի բօսքիւն մէջ, արցունք շարժելու չափ ողորմուկ: « Իեռ թուղթերուս մէջ է Արփիարին նամակը, սրտազեղ յուզումով գրուած, զոր ինծի ուղղած էր Լոնտոնէն այդ յօդուածներու վրայ, անձնուրութեանս առջեւ բառ մը չգտնալով իր երախտագիտութիւնը յայտնելու . . . » կը գրէր Ա. Զօպանեան: Ո՛րչափ պիտի ուզէի գիտնալ ներողութեան ու անյիշաչար գորովի նամակը զոր Արփիար իր պաշտպանին գրած ըլլալու է վերջերս, անոր մութին մէջ իրեն դէմ նիւթած մատնութեան փորձին զղջումը ամօքելու համար . . . :

Ա. Զօպանեանի ինծի գրած այդ նամակը—Արփիար խընդրէն ծագած—սկզբնապատճառը եղաւ մեր յարաբերութեանց նիւթական խզումին (որովհետեւ ես, տարիուկէսէ ի վեր արդէն, իր անուղղակի կրկնուած արխաններուն առջեւ պէտք եղածէն աւելի թափանցիկ լուութեամբ մը մաքրագործած էի ինքզինքս իր բարեկամութեան թունաւոր աղտէն):

Անպատում նամակներու փոխանակութիւն մը ունեցանք այդ առթիւ որ ատեն մը տեւեց եւ ուրիկից «որոշ չափով» — ինչպէս կ'ըսեն մեր ուսանալի եղբայրները — օգտուեցաւ Ա. Չօպանեան: Վերջերը ա'լ խնդրեցամ անոնց անագորոշն ձյմարտութենէն՝ բզիկ բզիկ պատուելով պահարանի մը մէջ կը լեցնէր պատասխաններս ու ետ կը դարձնէր ինձի. . . զանոնք խնամքով դոց ընկէ վերջ: Կ'երեւայ թէ այդ մանրուած թուղթի կտորուանքները իր այրող հոգին զովացնելու յատկութիւնն ունէին: Ես պահած եմ իր չըլլալի՛ք նամակները ու ամէն անգամ որ պէտքը զգամ թոքապատառ խնդալու՝ անոնցմէ մէկը կը բանամ:

— Ու այս բոլորը չգիտի ըսէի ձեզի, ո՛վ բարի մարդիկ, եթէ հարկ չըլլար վանել այն սագրանքի ու ոճիբի չարաշուք գաղափարները զորս ձեր մտքին մէջ արթնացուց անշուշտ Ա. Չօպանեանի սա ահեղ խօսքը, — «Միջագէտ մը որ ինձի առիթ հայթայթեց երկար ատեն ինձմէ ծածուկ մնացած այդ նկարագիրն իր անսքող արհաւիրքին մէջ տեսնելու, զիս մղեց այդ պարոնին հետ (ծառանիդ!) վերջնապէս խզելու յարաբերութիւններս»:

Բայց եթէ «Բաշալեան Երեկոյթը» պատրուակ մըն էր միայն Ա. Չօպանեանի համար, Արփիարին անակնկալ — կամ ստիպուած — ներբողեանը պաշտպանութեան թանկագին զէնք մը կ'ըլլար անոր: Անգրագէտ ու պարզամիտ ամբոխին աչքին՝ ժողովրդական հրապարակագրին հիացումի ու յարգանքի այդ սանձարձակ ու հանդիսաւոր յայտարարութիւնը ապահովիչ ու քնացնող երաշխաւորութիւն մըն էր Ա. Չօպանեանի «անուրանալի» գերազանցութեան: Կոյր ու խուլ Տգիտութեան անվկանդ պատանէջը կը կանգնէր ան որուն հետեւէն միայն աղբային փառապսակ Իմաստակը պիտի յանդգնէր իր ոչնչութիւնը պաշտպանելու:

Քրքրե՛նք քիչ մը, եթէ կ'ուզէք, Արփիարի այդ վճարակաւան-ներբողականին տարօրինապէս շահեկան հոգեբանութիւնը:

Ա. Չօպանեան իր երախտագէտ պաշտպանեալէն կը հռչակուի հոտ իրբեւ մեծ գրագէտ մը, մեծ քաղաքագէտ մը ու մեծ հայրենասէր-գործիչ մը:

Այս եռապատիկ շքեղ հաստատումներէն վերջ, Արփիար կ'աւելցնէ .

— Հայե՛ր, Չօպանեանը աղբին համար զոհուող մըն է. . . Չօպանեանը նեղն է, փարայի պէտք ունի. . . Հայե՛ր, ձեր ամենուզ ճիտին պարտքն է Անանիսի պարապը վճարել, որպէսզի Չօպանեան հանգիստ ապրի (չատ քիչ գգուական «Ոսկեծղի» ին համար!) Բարբիզի մէջ ու աղբը իր փրկութեան գլխաւոր յոյսերէն մէկը չկորսնցնէ. . .

Այս վերջին բարեկամական ռեֆրալը զիս չի գայթակղեցներ չափազանց: Նոյնիսկ պիտի փորձուիմ ազնիւ ու յուզիչ գտնել շառիկա Արփիարին կողմէն որ արհամարհելով — թէեւ քիչ մը ուշ — խանութպանի ռամիկ ու հասկանանալի մտահոգութիւններ՝ չի վարանիր. . . զաշնակից թերթի մը պահպանումին նպաստելու:

Չպիտի ծանրանամ Արփիարին գրական գնահատումին վրայ ալ: Մօտէն կամ հեռուէն գրականութեան հետ առնչութիւն ունեցող բաներու մասին իր սրտածմլիկ տգիտութիւնը զիս զինաթափ պիտի ընէր անշուշտ: Կը տեսնամ կոր սակայն թէ Բաշալեանի Լոնտոնէն բացակայութիւնը աղէտաւոր հետեւանքներ կը սպառնայ մեր գրասէր (?) հասարակութեան մէջ Արփիարի ունեցած գրագիտի համբաւին: Գոնէ նամակով մը Բաշալեանին հաւանութիւնը առնէր՝ Իմաստակութեան Վեհապետին վրայ իր սա անմահ ֆոսքը գրաշարին յանձնելէ առաջ. — «Անանիսի խմբագրապետը հիմնովին կը ձանձնայ տիեզերական մատենագրութիւնը եւ մասնաւորապէս Ֆրանսականը. . . »: Ասիկա ստորագրելէ վերջ ա'լ մարդ կրնայ համակերպիլ ճանկիւլեանի մը մտաւորական եղբայրակցութեան: Փիղի գգուանքի մը պէս տագնապող այս քօմբլիմանին առջեւ Ա. Չօպանեան ինքն իսկ քիչ մը մնած ըլլալու է: Ամէն պարագայի մէջ իր կեդրոնականի աշակերտներն են մանուսնիդ որ պէտք եղածին պէս ըմբոշխնեցին

Արփիարի այդ շնորհակցութիւնք եկեղեցիքն:

Միեւնոյն ներողամիտ անտարբերութեամբ չեմ կրնար սակայն անցնիլ մեծ քաղաքագէտի տխուր սին վրայէն որով Արփիար կը ձեռնադրէ իր Բարիզի թիկնապահը: Արփիար հոտ գիտակցաբար կը սատէ: Արփիար պէտք է գիտնայ որ իրեն սուղի կրնայ նստիլ ազգը խաբելու իր այս անխիղճ փութկոտութիւնը: Արփիար չէ մոռցած որ իր Բարիզի գործակալը Անանիսը հիմնելով կ'ուզէր մանաւանդ իր ու միւս կուսակցական մարմիններուն կոնակին վրայ՝ նոր ուղղութեան մը, նոր գործունէութեան մը, նոր շարժումի մը գլուխը անցնիլ ու ինքզինքին ազգային առաջնորդի գերակշիւ ու շահաբեր գիրք մը շինել: Արփիար տարի մը առաջ չէր ներքեր առիկա Ա. Զօպանեանին: Արփիար գլուխէ որ Անանիսի շոշորդը իր այս հսկայ երազէն սթափեցաւ, թնդական շարքէ մը ետք խելայեղ կ'ափերու որոնք լուսապայծառ գաղափար մը տուին իր շիւղ գիտուններուն ու իր ամօթալի անկարողութեանը վրայ: Առիկա հարկաւ անհաճօյ չեղաւ Արփիարին: Իր «գեղարուեստական» քուրջին իւրաքանչիւր թիւին նոր քաղաքականութիւն մը լըզըրճող շուարած տիրացուն ամենէն աւելի Արփիարը զուարճացուց կարծեմ իր քաղաքական ձախաւերութիւններուն անհնարին խաղքութեամբը: Եւ հիմա որ ա'ւ վըտանդը փարատեցաւ, հիմա որ Ա. Զօպանեանի փառատենչ ծրագիրները վերջնականապէս ընկզմեցան իր տխարութեան փոթորիկին մէջ, հիմա որ ամէն մարդ անոր քիթին կը խնայ, երբ դեռ յամառի ան փաղափարէն նրբին ու սղաւոր մտահոգութիւններ ցուցնել՝ քիչ մը ուշ չի՞ հասնիլ Արփիարին. . . կեղծ վկայութիւնը: Բայց ո՞վ գիտէ թէ Արփիար— որ ի ծնէ ու գրեթէ ակամայ իոսկիւր մըն է — չէ ուզած ասով իր քաղաքագէտ զոհին «գլուխը վճարել» ինքզինքին: Որովհետեւ այդ չարաշուք փառստօնը բառ մը չի հաւտար յաճախ իր քսածներէն, ու այսօրուան այդ աւելնոտ խնկարկուն՝ երէկ, Լոնտոն, իմ առջեւ, Ա. Զօպանեանի ազգային-քաղաքական հոյակապ յօդուածներուն ընթերցումէն վերջ, սա հրէջօրէն սրտատուջ ու հիւանդա-

գիւորէն անգութ բացազանչութիւնը կը կրկնէր ամէն անգամ .

— Ա՛հ, եթէ քարեկաւ չըլլայինք, ի՛նչ «ժամանցներ» ունէի գրելիք Արշակին վրայ . . .

Ամբողջ Արփիարը այդ խօսքին մէջն է . . . շնական ու շիրիկ միանգամայն:

Գալով հայրենասէր գործիչի փառաւորումին որ էլիմը կը կազմէ Արփիարի յօդուածին եւ որ է՛ն նուազ շահաբերը չէ իր պաշտպանին փառքի տխուր սներուն՝ չեմ քաշուիւր այդ մասին ըսելու ամբողջ մտածումս, իր աննենգ մերկութեանը մէջ:

Զհաստատելը թէ Ա. Զօպանեան— հակառակ իր քաղաքագէտի անմեղ ու զուարճալի յաւակնութիւններուն— Հայերը Ֆրանսայի ծանօթացնելու գործը ո եւ է Չէրպէ մը աւելի ձեռնահասութեամբ ու նուազ անչորհքութեամբ կը տեսնայ՝ պիտի ենթադրէր բիրտ անուղղամտութիւն մը, կամ շատ շատ . . . Միտքիւն ընթերցող մը ըլլալ: Բայց, միեւնոյն ատեն, Ա. Զօպանեանի բարիքեան ազգանուէր գործունէութեան առջեւ հիացումէ սահմակելու ու երախտագիտութենէ քրտնելու համար պէտք է կարծեմ համոզուած տիրացու մը՝ կամ գիւղին խորէն նոր հասնող բարի խըռօ մը ըլլալ:

Ա. Զօպանեան չէ՛ կրցած ու չի՛ կրնար — որչափ որ ալ Արփիարին դժնդակ տգիտութիւնը չտարակուսի ատոր — եւրոպական ճշմարիտ եղիքի մը վրայ գերազանց իմացականութեան մը տպաւորութիւնը թողուլ: Ա. Զօպանեան չունի, օրինակի համար, Տիգրան Երկաթի մը մտաւորական անվիկիւրդ. եւ եթէ Պատէսի՛ խեղճ տարուած գրողին ուխտած պաշտամունքը մեղ կը խանդաղատէ՝ ոչի՛նչ այնչափ անդիմադրելիօրէն զաւելչական է մեղի համար քան Անաթօլ Ֆրանսի պէս վարպետի մը գրչին տակ սա համոզումի ու վստահութեան չմեղանչող խօսքը, — «հպարտ ու գորովալից հոգիով բանաստեղծ մը, Ա. Զօպանեան . . . »: Ի՛նչպէս լուսապայծառ կ'երեւայ այդ ֆուզին մէջ մեծ մատենագրին խորունկ ու աշխատալի ծանօթութիւնը (Ար-

չաղոյսի Չույնէր» ու եւ «Թրքոռաւնէր» ու գլուխ գործոց-
ներուն . . . :

Արդէն — ըսած ըլլանք աս — շատ քիչ բան պէտք է
օտարները մեզմով շահագրգռելու համար: Մեր Տառապան
քին ազիտորմ ու արիւնտտ խօսքը լայնօրէն կը բաւէ ա-
տոր: Ու յաճախ — անգուժ հեղնութիւն — մտաւորական
խեղճութիւնը գրեթէ պայման մը կ'ըլլայ վաւերականու-
թեան, ինչպէս մտաւորական գերազանցութիւնը կասկա-
ծանքներ, նոյնիսկ անտարբերութիւններ կ'արթնցնէ եր-
բեմն՝ իրենց անտարակուսելի, բնական անհաւասարելիու-
թեան ամբարտաւան համոզումին մէջ խարսխուած եւրո-
պացիներու քով: Աւելորդ է ըսել սակայն թէ ապուշու-
թեան ու անկարողութեան աստիճան մը կայ ուր Չէրազ-
ները միայն կը հասնին եւ ուր կ'անպատուեն ցեղերնին,
օտարներուն առջեւ, իրենց անձին անպատասխանատու
անճոռնիութեամբը ու իրենց ուղեղին քսամներէ դատար-
կութեամբը:

Ա. Չօպանեան միջակօրէն ուշիմ ու պէտք եղածին
չափ. . . իմաստակ' կը ճարտարութի շահեկան ըլլալ ու իր
հայ (կամաւոր!) տարագիրի հանգամանքը օգտակարապէս
կը շահագործէ: Չպիտի ըսեմ այն ճակատադրական ու անու-
ղոք անպատեհութիւնը զոր կը ստեղծէ այդ խեղճ տղուն իր
օղբալի ֆիզիք եւ որ կը ստիպէ զինքը հակակրելի, ան-
հանգուրթելի ըլլալ ու եւ է օտար հպումի: Հակառակ ֆրան-
սացի գուարթ ֆիլիքսին որ՝ սերունդ մը խնդացնելու ազ-
նուական փառասիրութեամբ՝ անցեալ ձմեռ, գաւառական
թերթի մը մէջ համակրելի ու նոյնիսկ . . . « վայելչահասակ »
գտաւ զայն, հակառակ այս գիււային կատակին Անանիսի
յազթական թարգմանութեանը՝ այդ ճղճիմ, ճիւճէ ու շեշ-
տօրէն սեմական դիմադրութեամբ գատապարտուած տղան
մեր ցեղային տիպարը ազգուօրէն ներկայացնելու համար
պէտք եղած ֆիզիքական յատկութիւններէն ցաւազինօրէն
գուրկ է:

Առանց ուրանալու Ա. Չօպանեանի Բարիբեան հայրենա-
սիրական գործունէութեան յարաբերական օգտակարութիւ-

նը՝ պէտք չունի ազգը իրեն երախտագէտ ըլլալու (1):
Ասիկա արհեստ մը ըրած է իրեն Ա. Չօպանեան: Ամէն պարա-
գայի մէջ իր — Անաթօլ Գոռնսէն ա՛նչափ գիտակցօրէն
գնահատուած — գրական տաղանդը չէ՛ որ իրեն ապրուստի
միջոց մը պիտի ըլլար հոս: Ու թերեւս ինքը, սրտին խո-
րէն — ըսելու ձեւ մըն է միայն ասիկա — երախտագէտ է
Հայուն նահատակութեանը որ զինքը հինգ տարիէ ի վեր
Բարիզ կ'ապրեցնէ: Յետոյ, քիչ մը շատ միամիտ ըլլալու
է չտեսնալու համար այն անձնական ռեֆրալի մշտակայ
մտահոգութիւնը զոր Ա. Չօպանեան կը մատնէ իր հայրենա-
սիրական անշահախնդիր գործունէութեան մէջ: Ասոր հա-
մոզիչ ապացոյցներէն մէկն էր Վօսվիլի Ռափիկէն որ բա-
ցարձակ ֆուռ մը եղաւ, հակառակ իր հրաշալի յայտագրին:
Կիսովին պարապ սրահի մը առջեւ էր որ տեղի ունեցաւ
ան, Ա. Չօպանեանի մտերիմ բարեկամները, իրենց կողա-
կիցներն ու մեքոնները — հայ որբերուն ի նպաստ ձրի
տոմսակներով զինուած ամենքն ալ — հազիւ բաւելով լե-
ցընել սրահին միւս կէտը:

Կ'երեւակայեմ թէ այս Ռափիկէին մտածումէն գիշեր մը
ամբողջ արթուն ներշնչուելով՝ մութնուլուսուն ելած ըլ-
լայ Լոնտոն տքնող Արփիարը, իր Բարիզի հերոս-բարե-
կամին ժամանակակից դէմքը գծելու համար: Ու կը սիրեմ
հաւատալ որ Արփիարի մտքէն չէր անցներ, այդ յափշտա-
կութեան մաքուր վայրկեանին՝ թէ իր յօրինած պատկե-
րին ընթերցումէն խանդաղատած ու գինովցած՝ Ա. Չօպան-
եան պիտի տպարան վաղէր, շարթ մը վերջը, ու իր
երանելի գրաշարին պիտի խնտիւ ապսպրէր ցրուել « Բա-
շալեան Երեկոյթ » ին առթիւ Բաշալեանի դէմ իր կատա-

(1) Արդէն պէտք չէ կարծել թէ հայկական դատը Գրան-
սայի ծանօթացնելու ճիգերը Ա. Չօպանեանով սկսած են: Բո-
ցեանդն հայրենասէրին(?) Պօլիսէն Բարիզ խոյանալէն ա-
ռաջ իսկ « Ուսանողաց Հայրենասիրական Միութիւնը » գո-
վելի եռանդով մը կ'աշխատէր ատոր, ֆօնֆեռաւներ սար-
քելով, պրօշիւռներ հրատարակելով ու բարիզեան մամու-
լին հայանպաստ յօդուածներ թելադրելով:

դուժիւնը ոռնացող շարուած ու կապուած էջերը: Անա-
նիսի մեծհոգի եմբարապետը Բաշալեանին հանդէպ ունե-
ցած իր վրէժխնդրութեան հրաժարումին ու դարմանումի
փութկոտութեանը մէջ քաղցր ապահովութիւնն ալ ունէր
անշուշտ թէ նոր կեանքը պիտի գոցուէր իմ առջիւ, իր
մոլեգին յարձակումներուն պատասխանելու համար:

Բնական էր որ Արփիարի յօդուածէն ետքը ա'լ չկըր-
նայի շարունակել նոր կեանքին իմ գրեթէ գրական աշխա-
տակցութիւնս: Բայց ո'չ նուազ բնական էր որ նոր կեանքը
բանար իմ առջեւ իր սիւնակները պաշտպանելու համար
ինքզինքս Անանիսի յարձակումներուն դէմ: Նախ՝ որովհե-
տեւ իմ երկու տարուան աշխատակիցի տարրական իրա-
ւունքս էր ասիկա, երկրորդ՝ որովհետեւ խնդիրը նոր
կեանքի գրական խմբագրապետին, լեւոն Բաշալեանի
շուրջը կը դառնար, ու անոր գրականութեան համար իմ
համոզուած հիացումի ու պատճառաբանուած խանդավառու-
թեան հրապարակային հաստատումներս էին որ Ա. Չօպան-
եանի առիթ տուին՝ երկու տարի առաջ իրեն շնորհած մա-
հացու հարուած իս դէմ այդ փօռոյիւ մաքառումին:

Նոր կեանքի տգեղ ընթացքը զիս չի զայրացներ
սակայն արտակարգօրէն: Գիտեմ որ հոտ իմ տեղս չէր:
Ու գոհ եմ իսպառ դուրս ելած ըլլալուս այդ տունէն ուր
քիչ մը միշտ օտար զգացած եմ ինքզինքս եւ ուր անձնա-
կան թանկագին բարեկամութիւն մը միայն զիս ուշացուց
այնքան ատեն:

* * *

Անանիսի «Վայելչահասակ» խմբագրապետը երկու տա-
րի լուռ մտածելէ վերջ, հրապարակ կը նետուի նորէն եր-
կու հրաշալի, ջախջախիչ փաստերով զինուած որոնք ան-
զիմագրելիօրէն կը հաստատեն իմ քննադատական համո-
զումներուս անկեղծութիւնը ու տիրակալութեն կը բացատ-
րեն իր գրականութեան ինքի ազգած անյաղթելի զոլուանքը:
Ա. Չօպանեան ազնուական բարձրութեան հոգեյոյզ

չեշտով մը իր ընթերցողներուն դարձած՝ կը . . . պատաս-
խանէ

1. Թէ՛ կ'ատեմ զինքը.
2. Թէ՛ «բան չեմ հասկնար իր դրականութենէն . . . »:
Այսչափ միայն:

Չէ՛, պիտի ընդունիք դոնէ, ո'վ Անանիսի բերանա-
բաց ընթերցողներ, որ ձեր «պզտիկ վարպետ» ին ինք-
նապաշտպանութեան այս նոր եղանակը քիչ մը շատ ման-
կականօրէն հակիրճ է: Ասիկա խօսքն է կոխէ փախչող ան-
ուղղամիտ ու վատհոգի հակառակորդի մը որուն համար ա-
մենէն այսպանական արգարացումն իսկ ընդունելի է:

Բայց, իրաւ, կ'ատեմ ես զինքը:

Չէր արժեր ապահովաբար որ վեր առնէի այդ խեղճու-
կրակ չքմեղանքը, եթէ՛ գրեջ սխալեալ ի վեր՝ կարգ մը հե-
ղանակները պարկեշտ մարդիկ չհորձուէին ասեցող ու փիւ-
նակող ձգտողներ տեսլալայել իմ մեջս, ամեն անգամ որ իմ
հաւնոգրակներուս բնուն անկեղծութիւնը բացարձակապէս զայ-
րացկոս ու դատաւ աստիճաններ մը կը դասապարտէ զիս: Կ'ե-
րեւայ թէ ասիկա չպիտի երբէք հասկցուի — առանց անարդ
կասկածներու — անուշիկու կեղծիքին ու ներքինի հան-
դարտութիւններու հաճող մեր հասարակութենէն: Անցնինք:

Ու ծիծաղելիօրէն սակրիտակար խօսքեր ունիմ հիմա
ձեզի ըսելիք: — Չէ՛, չեմ ատեր զինքը . . . : Ի՞նչպէս կըր-
նամ ատել այդ խեղճ անիրաւուած էակը զոր այնչափ խո-
րապէս ու ամբողջապէս կը ձանչնամ: Ի՞նչպէս կ'ուզէ որ
ատեմ զինքը . . . ես որ իր գաղտուկ կեանքին լլկող ու
սարսափահար Ամօթը ու իր է՛ն անկեղծ հպումին զրգուած
պժգանքը զիտեմ: Ի՞նչպէս կ'ուզէ որ ատեմ զինքը . . . ես
որ իր նայուածքին փակած ու իր ձայնին մէջ զողացող
ճակատագրական Ստութիւնը կը հասկնամ: Ի՞նչպէս կ'ուզէ
որ ատեմ զինքը . . . ես որ իր մտքին փոթորիտ Պարսպը
չափած՝ ու իր հողիին նեխութիւնը ձեռուըներովս շօ-
չափած եմ . . . :

Չէ՛, չեմ ատեր զինքը . . . : Ի՞նչպէս կրնամ ատել այդ
բոլորովին շինճու ու արուեստագիտի կեանքով մը ապրող ու

1006
64978



սպառող տղան, որ չգիտցածը սորվեցնելու, չեղածը երեւաւու, չղգացածը արտայայտելու, չհասկցածը բացատրելու, չտեսածը ցուցնելու գծնդակ հարկին մէջ կը զգայ ինքզինքը, որ իր այս վիճակին եղերական խաղաղութիւնը առաւել կամ նուազ տաժանելի կեցողութեանով պարտկելու համար գիշեր ցորեկ ինքզինքը կ'ուտէ եւ որ ամէն օր քիչ մը աւելի կը մօտենայ՝ հրուած քշուած անազոբոյն ճակատագրականութենէ մը՝ մեծութեան խելագարներու ապաստանարանին ուր իր սխալ ու անխմաստ կեանքը վերջացընել գատապարտուած կը թուի ըլլալ:

Չէ՛, չեմ ատեր գինքը. . . : Ի՞նչ բան կ'ուզէ որ զիս անհանգիստ ընէ իր մէջ, — գրական հրաշակերանե՞րը զորս ստորագրեց. . . գոնէ ատիկա մտքէն չանցնէր անշուշտ: Հասկա ի՞նչ, — անօրի ջննարու ապանովորի՞ւնը զոր կուտայ իրեն խելացի ու վեհանձն հասարակութեան մը երախտագէտ տխմարութիւնը. . . բայց ես արդէն մտքէս չեմ անցուցած վայրկեան մը որ ճշմարիտ գրականութիւնը ազրեցնող ասպարէզ մը ըլլար մեր մէջ, ո՛չ ալ միամտութիւնը ունեցած եմ կարծելու թէ պարկեշտօրէն ու հպարտօրէն աշխատող դրօպէտը՝ գեղեցկութեան փոխարէն զոր պիտի տար մեր փողովուրդին՝ պատառ մը հացի իրաւունք ունենար անկից:

Չէ՛, չեմ ատեր գինքը. . . : Ի՞նչպէս ատեմ մէկը որ ետեւէս կը զովանայ իր հոգիին թոյնը փոխելով իր սխալի բարեկամներուն առջին եւ որ չպիտի կրնար աչքերուս մէջ նայիլ վայրկեան մը: Ի՞նչպէս ատեմ մէկը որ «ասպատակ» մը խոստացած էր ինձի — « առաջին անգամ որ կեանքի մէջ (?) գիմացը ելլալու համարձակութիւնն ունենայի » — եւ որ պուլժառին վրայ ճամբան կը կորսնցնէ երբ ինձի հանգիստի, կամ յանկարծ ի՞նչ անգիտած նիցչէին ու չը թղթատած էմբրօնին վրայ կը սկսի խօսիլ քօլէն քալող հեռաւոր ու շուարած մանկանացուին. . . հոգ չէ թէ Ամերիկայէն հասնող գաւառացի ջերմեամեզ բաժանորդ մը ըլլայ ան:

Չէ՛, չեմ կրցած ու չեմ կրնար ատել գինքը, ես որ

այնքան կը սիրեմ ազնիւ ու արդաւանդ ատելութիւնները: Ընդհակառակը, շատ հեղ, ճամբուն վրայ, իր ողորմուկ կունակին ի տես, մեղքցած, մեղքցած եմ գինքը: Անխմաստ խղճահարութիւններ ունեցած եմ խորտակած ըլլալուս՝ իր « թուղթի փառք » ին համար ազրող ու անոր մշտական յաճախանքովը միայն երջանիկ՝ այդ տխուր տիրացուն զոր կրնայի հանգիստ ձգել, երբ գրականորթաւը աւելորդ ու հստանայի պերճանք մը նկատած ըլլայի մեր ազգիկ համար:

Ատե՛լ գինքը. . . ա՛հ, վիթխարի փաստը: Բայց եթէ նոր հասած տղաքները իրաւցնէ ատէին գինքը — չբաւականանալով մեղքնալ ու արհամարհել — կը կարծէ՞ թէ պէտք պիտի ունենային ամենապզօտիկ ճիգի մը վերաւորիչ ըլլալու համար իրեն. . . քանի որ գրականութիւն կ'ընեն անոնք ու քանի որ գիտեն թէ՛ գեղեցկութիւն իրականացնող էջի մը տակ ամէն անգամ որ իրենցմէ մէկուն անունը տեսնայ Ա. Զօպանեան՝ թաղմանական կոչնակներ կը զօղանջին իր հոգիին մթութեանը մէջ. . . :
Ու ասիկա կը բաւէ անոնցմէ է՛ն վայրագներուն. . . :

* * *

« Բան մը չի հասկնար իմ գրականութեանէս » երկրորդ փաստը այլապէս զուարճալի է: Ու չեմ կրնար դիմադրել ամբողջ այդ հատուածը հոս արտասուելու հաճոյքին: Ա. Զօպանեան՝ ինքզինքէն ամչնալու երկչոտութեամբ՝ փակագիծի մը մէջ ասպաստանած կ'աճապարէ:

« Այն կարծիքը զոր Պ. Պարթեւեան կազմեր է իմ գրական գործիս (?) նկատմամբ մտահոգութիւններուս մէջ ու եւ է տեղ մը չի բռներ (անանկ չէ՞, Արսէնեա՛ն) » եւ նոյն իսկ բնական, բացատրելի կը գտնամ որ իր մտաւոր ու հոգեկան կազմուածքն ունեցող մարդ մը որ մանաւանդ իր գեղեցկագիտական (?) սահմանափակ ու միակողմանի զարգացումին կը միացնէ իմ անձիս գէմ ունեցած այնքան հեշտականօրէն մոլորին ատելութիւն մը, յաւն չհասկնայ իմ գրականորթներս »:

Այս ևխուիփիփ հատուածին վերջին ֆուզը որտաընդոսա քրքիջով մը ողջունուեցաւ Մանչէսթըրի վաճառականներէն : Արգարագատ « Բարիները » որոնք՝ առանց հայերէն գիտնալու՝ այնչափ ազէկ կը հասկնան ու կ'ըմբռնան Սևահիսի գրականութիւնը չէին կրնար անշուշտ ընդունիլ որ « մեր գրականութեան նորագոյն շրջանին է'ն հոօր գէմքը » — Ա. Չօպանեանին իսկ վկայութեամբ — իրենցմէ վար մնար իր գրական հասկացողութեամբը : Բայց երբ իրենց խնդուքին ճարպոտ փոթորիկը իջաւ՝ գիբուկ « Բարիները » որոնք Հեգնութիւնը կ'ատեն, չարաշուք կասկածներ ունեցան իրենց որդեգրած կնքադրասպետին ուղղամտութեանը վրայ ու ըմբոստացան անոր գէմ : « Ի'նչ . . . քիթերնո՞ւն մի կը խնդար կոր . . . անանկ է նէ եկող տարի . . . էն մէկը կ'առնէր իբրեւ բաժնեգին . . . » :

Բարի՛ « Բարինե՛ր », մի՛ բարկանաք, խնդիրը ձեր գուշակածին չափ պարզ չէ՛, ու եթէ իմ քանի մը խօսքերս չբաւեն ձեզ լուսաւորելու՝ Շայլօքը — ձեր գրական հայրը — հոգ, քովերնիդ է. անոր գիմեցէ՛ք, անիկա գեւ հեղութեան գանձեր ունենալու է կղպուած իր հոգիին մէջ եւ որոնք ձեր մերձեցումին սոկի բանալիներուն կը սպասեն . . . :

Հիմա, կատակը մէկդի : Չէ՞ք կարծեր որ — այն ընդհանուր հիացումի ու բերանաբաց խանդավառութեան շրջանին ուր մեր գրական է'ն մեծկակ հեղինակութիւններն անգամ քիչ մը շլմորած իր գետնիկ աւիւնին առատութենէն՝ անոր առջեւ կը խոնարհէին — իմ միս մինակ գալ, իր գրականութեան զազրութիւնը հաստատելու կարող ըլլալս ու իր հետատկար ազդեցութիւնը հրապարակաւ մասնելու խղճահարութիւնս է մանաւանդ որ Ա. Չօպանեանի իրաւունք կուտայ իմ գրական հասկացողութեանս մասին տարակուսելու : Ինքզինքը բռնի խաբելու իր այդ սրտաշարժ ջանքը զիս մասնաւորապէս կը գուարձացնէ, որովհետեւ այդ միամիայն կալլոիին սահմանուած խօսքը ստորագրողը՝ վեց տարի շարունակ, գիշեր ցորեկ, գրականութիւն խօսած է ինծի հետ — ուրիշ բանի վրայ անկարելի ըլլալով իրեն խօ-

սիլ — ու վեց տարի շարունակ, գրաւոր կամ բերանացի, իմ կարծիքս, իմ դնահատումս, իմ դատաստանս փընտրած, գրգռած, աղերսած է իր հրատարակած իւրաքանչիւր էջին համար : Ու ես որ՝ պարզ ու ամէն յաւակնութենէ մերկ ազայ մը՝ կեանքի ամէնօրեայ ընկեր մը եղած եմ իրեն, ես որ մեր բարեկամութեան երկար տարիներուն ո՛չ մէկ անգամ մտքէս անցուցած եմ մրտաուած թուղթի կըտար մը հանել ու կարգալ իրեն — թէեւ դրօշմաններէն չէն պակասած ախրացուի մատունքներ — ես՝ հասարակ մահկանացու մը՝ որ երբէ՛ք չեմ արթնցուցած իմ մեծանուն բարեկամիս մէջ օր մը գրել յանդգնելու կասկածը, ես՝ այդ մըտերիմ ու սիրալիբ բարեկամութեան շրջանին՝ է'ն անկեղծը զինքը յաճախողներուն ու է'ն մօտիկը իրեն՝ չեմ քաշուած ըսելու իրեն ինչ որ մտածած եմ օրը օրին իր հրատարակած յօդուածներուն վրայ : Կը խոստովանիմ որ միշտ փութկոտութեամբ ու հաճոյքով մօտիկ ըրած է ինծի ու հեղութեամբ՝ երբ հազիւ գրական տարտամ գիտակցութեան մը հասած — Պօլէն իսկ արգէն — գիտողութիւններ, քննադատութիւններ ներած եմ ինքզինքիս իր « գրական դործին » նկատմամբ : Իզո՛ւր պիտի նկրտէր կասկածի տակ գնել իմ ուղղամտութիւնս ասելութեան ու չկամութեան անխմաստ ու ծիծաղելի առարկութիւններով : Այս կէտին ձեռքէս չի կրնար ազատիլ : Սեղանիս վրայ է մեր վերջնական խզումին առթիւ ինծի գրած իր չնաշխարհիկ նամակներէն մէկը ուրկից չեմ կրնար չշրջանակել հոս սա ինքնաբեր ու թելադրական խոստովանութիւնը .

« Քեզի ամէն բան ներած եմ, ներած եմ նոյն իսկ որ իմ դիմագր disséquer ընես գրական անձն . . . գրեթէ հաճոյքով մօտիկ ըրած եմ գործիս վրայ ըրած գիտողութիւններդ . . . եւն . . . » :

Ու այն ատեն ալ չէի ատեր հարկաւ զինքը . . . դոնէ գեւ « կեանքիս նպատակակէտը, պաշտօնն ու գործը դարձուցած չէի իրեն դիմ ատելութիւններ ցանկել շուրջը » !!!

Ա՛հ, պաշտելի արձակը :

Անշուշտ պիտի ուզէր — անո՛ւչ ազան — որ միշտ այն-

պէս մտածէի ինչպէս երբ՝ տասնըվեց տարեկան խանդավառ խելք մը՝ իս ներկայացուցին իրեն: Հիացումէ գրեթէ զողալով էր որ, այդ իրիկունը, Մօտայի արբշտող վերջալոյսին առջեւ մօտեցայ մե՛ծ բանաստեղծին որ անհամար յօդուածներ «տպե՛ր» էր արդէն Արեւելքին, Մասիսին ու... Բուրասուսն Մանկանցին մէջ: Ես այն առեւն «Պուրծէ եւ ֆօ֊ փէ կը ճանչնայի միայն եւ նկարչութիւնն ու երաժշտութիւնը ո եւ է intérêt չունեցող բաներ կը նկատէի. . . » (1): Բայց կեանքը անողոք է. օրերը կ'անցնին ու մտածումը կը ձերանայ ձերմիտը մազերուն հետ: Յանցանքը ի՛մն է՝ եթէ երեք տարի վերջը, ուրիշ իրիկուն մը, — միշտ նոյն Մարմարայի վերջալոյսին գրեթէ մէջէն — Հէյպէլի տանող նաւուն վերնայարկը ստիպուեցայ՝ իր անվհատ ու անձկագին թեւադրանքներուն տակ՝ սա խղածահար խօսքը ընել իրեն:

— Արշա՛կ, տղաս, թերեւս մարդիկ ըլլան որ հիանանքու գրականութեանդ վրայ, բայց վստահ եղի՛ր որ ո՛չ մէկը պիտի սիրե զայն. . . :

Առաջին անգամն էր որ կը համարձակէի բոլորովին անկեղծ ըլլալ գրագեհին հետ զոր կը սիրէի իբրեւ բարեկաւս: Ու խղճիսայթ մը ունեցայ անմիջապէս, բայց այդ խօսքը բերնէս թռած էր ակամայ ու անդիմադրելի մղուժով

(1) Ինչպէս ինքն իսկ միամիտ խնամքն ունեցեր էր յիշելու, եօթը տարի վերջը, միշտ իր խղութի անհնարին նամակներէն մէկուն մէջ, մտքէն անգամ չանցնելով թէ իր Իմաստակութեան երգումը կը ստորագրէր այդ խօսքով եւ թէ՛ երաժշտութիւնն ու նկարչութիւնը իրմէ աւելի սիրելու եւ ապրելու կարող՝ երբէ՛ք պիտի չզիջանէի օր մը — գեղեցկապաշտ Արփիարը չսքանչացնելու վտանգով — անոնց վրայ գրեղա իր պտռնիկ աներեսութեանը: Անոնք որ կը յիշեն՝ Ա. Չօպանեանի «գեղեցկագիտական» լպիրշ ֆալս֊ փիւսմին առջեւ Վաղարսն Չաչնի արհամարհոտ գեղեցիասեցու֊ րիւնը՝ անկարելի է որ ինձի հետ խնդալէն գալարուած չըլլան ինձի եղած «գեղեցկագիտական սահմանափակ ու միակողմանի դարդացում»ի յաղթական մեղադրանքէն:

մը, եւ արդէն քանի մը յուզարկաւոր արցունքներ — առաջինն՝ ըր կեանքին — կ'իջնային իմ սրտառուչ բարեկամիս լաջքերէն: Որովհետեւ՝ եթէ առաքինութիւններու բեռան մը տակ չէ՛ ընկճուած Ա. Չօպանեան՝ դոնէ հաս մը ունի որ իր ժանկարիքով հողին ու կեանքը կը լեցնէ ծայրէ ի ծայր, — գրականութիւնը — իր գրականութիւնը — մոլեղնաբար սիրելու առաքինութիւնը: Ու այդ խեղճ մեծսիրտ տղան որ անկարող եղաւ՝ իր հօրը մեղեդիս վրայ՝ երկու կաթիլ արցունքի ու դայն Պէշիկթաշի նաւամատոցը ձգեց, ես դարձաւ (1) — գերեզմանին ճամբան շատ երկար ու տաղտկալի գանելով — այդ խեղճ մեծսիրտ տղան սուգի ու գիշերուան մէջ կը տուայտի ու կը հեծկլտայ երբ իր մէկ գրական վիժուկը դիպցողէ մը անարգուի: Ընդհակառակը, հալածէ՛ դինքը, ամենէն վարնոց ընթացքը ունեցիր իրեն նկատմամբ, դուէ՛ մութին մէջ իր ետեւէն՝ քեզի ամէն բան կը ներէ վաղը — խեղճ մեծսիրտ տղան — ու քեզ կուրծքին վրայ սեղմած՝ իր փշոտ համբոյրներովը շրթունքներդ կը վերաւորէ, եթէ երթաս իրեն՝ «ի՛նչ աղուոր էր ան դրածդ. . . » մրմնջես. . . :

Այսպէս առաջին անգամ ես ճանչցուցի իրեն արցունքին անպատում քաղցրութիւնը: Թէեւ քանիցս իր կեղբոնականի շուարած աշակերտներուն անլուր պաղարխնով մը կրկնած էր թէ Բարիզ Լուվրի սիւղէն գտնուող Ռամպոնի Բեյրոնէն s'էնկախուին առջեւ «երեք ժամ անընդհատ լացած էր». . . բայց այդ արցունքները էապէս «գեղեցկագիտական» էին հարկաւ ու չէին կրնար՝ կսկիծի ալիքներու պէս՝ թրջել իր հողիին ապստամբը:

Ուրացումի ու քանդումի հաճոյքի մը համար չէր, ո՛չ ալ «անհատականութեանս դարթումին արամարանական

(1) Քանի որ «հայկական tératologieն» հարստացնել է միաքերնիս !! . . .

ապացուցումը» ընելու համար — երիտասարդ գրողներու սկիզբին Ա. Զօպանեանի անմեղ ու մխիթարական հոգեբանութեամբը — որ չորս տարի վերջը, Վաղարաւ Զալնի Ա. թիւէն իսկ, խնամքը ունեցայ շեշտելու թէ մեր ճիշդ շարունակութիւնը պիտի չըլլար այն շփոթ ու անհարազատ արտագրութիւններու խառնակոյտին որ կը կազմէր «անորակելի գրականութեան» շրջանը եւ որուն է՛ն «փայլուն» ներկայացուցիչն էր Ա. Զօպանեան:

Նոր ազաքներ հասեր էին, նոր ու տիրական ձգտումներով, գրական նոր խաչալի մը եղբայրական խանդավառութեանը մէջ միացած ու համերաշխ՝ մանաւանդ այն միահամուռ ու անզուսպ գգուանքովը զոր կ'ազդէր իրենց Ա. Զօպանեանի գրականութիւնը: Անոնց կողմէն, անոնց հաւանութեամբը, անոնց լուրաքանչիւրին մտածումը թարգմանելու քացարձակ վստահութեամբն էր որ Վաղարաւ Զալնի համբաւաւոր «Մենի»ին մէջ կը գրէի:

«Մեր թերթը՝ պայքարի թերթ մը՝ գիտական, իմաստասիրական ու գեղարուեստական խոշոր ու պոռոտ յաւակնութիւններ չպիտի ունենայ: Առանց այս թանկագին յատկութիւններուն կարելի ըլլալով գրական բաժին մը ուր, օրինակի համար, չերեւան (ու մտածել որ ասիկա ստիպւած ըլլանք ըսելու !!) օտար գեղարուեստին ու օտար գրականութեանց վրայ պատկառելի երկայնութեամբ ու վճիռներով հո՞՞՞ տաժանելի աքնութիւններ:

«Յանկարծակիի բերելու ու միամիտները հիացումի ստիպելու այս լիբրօ ու վերջապէս գիւրին եղանակը մերը չպիտի ըլլայ»:

Այս սոգերը՝ պէտք եղածէն աւելի թափանցիկ՝ Ա. Զօպանեանի կ'ակնարկէին: Ամէն մարդ հասկցաւ ասիկա: Երկայն ինքը, խելայեղ անհասկացողութեան մը մասնուած՝ հարցուց պայծառօրէն մեր Արսէնեան բարեկամին թէ՛ որի՞ կ'ուզողութիւնն այդ խօսքերը: Ու քանի մը օր վերջը գեռ սիրտ ունէր ինձի գրելու:

«Ես առաջինն եմ Վաղարաւ Զալնի ճշմարտապէս jeune ու սիրուն գրականութիւնը գնահատողներուն, այն պարզ

պատճառով արդէն որ գոհունակութիւնը ունիմ (?) տեսնել փթթումը, վերջապէս (!), այն մէկ քանի մաքերուն որոնց initiateurը եւ առաջնորդը եղած եմ, երկարօրէն (!); խնամտաբար (!!), խորապէս (!!!), այնպէս ինչպէս ոչ ոք եղած է ոչ մէկուն (!! ??)»:

Ասիկա Ա. Զօպանեանի կողմէն կսկիծոտ կշտամբանք մըն էր ու զինքը խնայելու արտում հրաւէր մը՝ մենէ անոնց որոնք տարի մը, կեդրոնականի մէջ, իր դասերը մտիկ ընելէ վերջ չէին կրցած աշակերտներ մնալ իրեն:

Նորէն ուրացումի ու քանդումի կատաղութենէ մը կուրցած չէր որ Վաղարաւ Զալնի Գ. թիւին մէջ Ա. Զօպանեանի գրականութեան մուսլ պարապը չափեցի: Ո՛չ քննադատական փայլուն էջի մը մէջ դժուարահաճ ու անողոք երեւալու տիլէթանթական մարմաջը զիս կը գրդէր, ո՛չ ալ նոր ու անակնկալ դաւանանքի մը յեղակարծ լաստակերտումովը հասարակութիւնը սահմակելու վեյզիկի քմահաճոյքը զիս կը փորձէր: Այդ յօդուածիս մէջ — ուրկից քիչեր բան մը հասկցան եւ որ «հայերէն չգիտցող վաճառականներուն» թանկագին համակրութիւնը ապահովեց Անանիսին — շատ յառակ հատուած մը կը բացատրէր սակայն զիս ստիպող շարժառիթը: — «Ո՛չ մէկ գրող կրցած է այնչափ վնասախար ըլլալ մեր սերունդին մտաւոր կազմութեան, որչափ Ա. Զօպանեան» կը գրէի հոտ, շեշտելէ վերջ թէ առանց այդ պարագային «մենք վեհանճնօրէն պիտի խնայէինք իրեն՝ ընկճող դաւնութիւնը իր ոչնչութեան հաստատումին», որովհետեւ «առմիկ ու անհեթեթ փառքերը մեզ անհանգիստ չէին ըներ ու այն ատեն միայն անդիմադրելի էր մեզի հաճոյքը աւանդալէպի մը քանդումին երբ ատոր մէջ կը տեսնայինք օգուտ մը ընդհանրութեան»:

Ամբողջ գրական սերունդ մը — Պօլսէն մինչեւ դաւաւներուն խորը — փճացուցած էր Ա. Զօպանեանի սխալ ու սուտ գրականութիւնը: Դեռ մինչեւ այսօր Պօլսոյ պարբերական ու աւօրեայ հրատարակութիւնները յորդառատօրէն կը հաստատեն ասիկա: Յառաջիկային պիտի դառնամ արդէն այս կէտին վրայ երբ Պօլսոյ մտաւոր կեանքովը գրա-

դիմ, ու պիտի տեսնանք այն ատեն որ Ծաղիկի նախկին նմադրատարերն բայակայութիւնը զգալի անգամ չէ՝ Պօլիս եւ թէ ինչ երջանիկ ու գինով խանդավառութեամբ մը կը շարունակեն հոն իր վարնոց գործը, իր ազդեցութեանէն թունաւորուած շարքուելիք տիրացուներ:

Անանիսի երեւումը նորէն փորձանք մը, պատուհաս մը, բարոյական քօլէնա մը կը սպառնար հայ գրականութեան: Ու այդ առթիւ հնչնուքի կոչնակը դարնելը խղճամբա հըրապարակագրի անխուսափելի պարտականութիւնն էր, պարտականութիւն մը որուն կատարումին առջեւ չէի կըրնար վայրկեան մը վարանիլ — նոյնիսկ եթէ մեր բարեկամութիւնը իր է՛ն առք վիճակն ունենար — Վաղարաւ Չայնի պէս առաջապահ թերթի մը մէջ որուն հպարտ բացարձակապաշտութիւնը ամէն նկատումէ վեր էր եւ որ յաւակնութիւնն ունէր կեղծիքի ու անամարութեան ուժերուն դէմ մաքառելու:

Ա. Չօպանեան զեռ չկրցաւ հասկնալ թէ ինծի համար հանրային բարոյական առողջապահութեան հարց մըն է լոկ իր գրականութեան մտահոգութիւնը:

Էական կէս մը սակայն պէտք եղած ընդլայնումով չէ շեշտուած Վաղարաւ Չայնի այդ յօդուածիս մէջ ուր կը գրէ, — «Ա. Չօպանեան — այդ «մտաւորականը», այդ «սեռեպրալը», ինչպէս պիտի ուզէր հիմա միամտօրէն որ որակէինք զինքը — ո՛չ միայն անկարող էր յետին մտածումին, այլ երբէ՛ք չունեցաւ բաղդը — հասարակ մահկանացուներուն շատյուած — ո եւ է մարդկային զգացում մը զգայր »:

Այս առիւթը տեսակ մը անուր արդարացում էին — սրտցաւ հասկցողներու համար — Ա. Չօպանեանի գրական տարապայման դարտակութեանը: Որովհետեւ — պէտք է արդար ըլլանք աւերակներուն եւ անկումի բոլոր ցաւերուն հանդէպ — յանցանքը իրը չէ՛ եթէ անկարող եղած է Ա. Չօպանեան իր գրականութեան մէջ ո եւ է մարդկային զգացում մը թարգմանելու, քանի որ իր կեանքին մէջ արդէն ի ծնէ գառազարտուած է այդ զգացումը չզգայր: Ասիկա իրին համար «բնական ու ճակատագրական վիճակ

մըն է», ինչպէս այնքան սրտառուչ կերպով մը գրած է ինծի հիւանդագին գիտակցութեան վայրկեանի մը անկեղծութեանը մէջ: Ա. Չօպանեան — մարդը — զիս ալ, ձեզ ալ ու բոլորդ մէկէն արգահատեցնելու արժանի «սեծեկեռե» մըն է, իր հոյակապ Մանուէլեան բարեկամին իսկ վկայութեամբ, որ քանիցս՝ իր գիտութեան վիթխարի հեղինակութեամբ՝ այնքան մագիստրոսաբար հաստատած է ինծի ասիկա: Ու իր միակ «գիւտն» է թերեւս աս որ մոռցուած ըլլայ Անանիսի անթիւ Մանուէլեանէր խմբագրականներուն մէջ:

Ա. Չօպանեանի ֆիզիքական այդ արատը լայնօրէն կը բացատրէ անոր գրականութեան մէջ կեանքի ու արիւնի չգոյութիւնը: Անկարող իր հաշտոյն ազդելու եւ զգալու՝ Ա. Չօպանեան գիրքերուն մէջ փնտռած է խարխափելով իրեն համար անծանօթ խորհուրդ մը մնացած բոլոր մարդկային զգացումներուն բացատրութիւնը: Այսպէս չէ կրցած գրական ուրոյն խառնուածք մը ունենալ ու՝ բոլորովին շխոռեւփ հոգի մը՝ անհնարին եղած է իրեն, գոնէ անգամ մը, ամենածղծիմ իսկապարտեան նօթի մը հասնիլ իր գրականութեան մէջ: Եւ որովհետեւ գիրքերն ալ բաւական ու պէտք եղածին պէս չէ՛ կարգացած՝ կրցած չէ — հակառակ ասոր համար մեզ համոզելու իր խելայեղ ջանքերուն — «մտաւորական» մը, «սեռեպրալ» մը ըլլալ ու հարկաւորաբար խնայող մը եղած է: — Ահաւասիկ ամբողջ մտայնութիւնը այդ տղուն:

Արդէն զժամգոլութիւնը ունիմ հիմա կարծեկից ըլլալու այս մասին իր բոլոր բարեկամներուն հետ — Բաշալեանէն մինչեւ Մանուէլեան — այնպէս որ ասով «գիւտ մը ըրած» ըլլալու յաւակնութիւնը չունիմ. ասիկա իրմէ չը ծածկելու անկեղծութիւնն է իմ միակ պզտիկ արժանիքս:

Այսպէս կամ այնպէս Ա. Չօպանեան ա՛լ լինցած (1) մըն է

(1) Կը ներում ինքզինքիս յուսալ թէ գալիք սերունդը զիս պիտի չանիծէ հայ գրականութիւնը մաքրած ըլլալու այդ տարախոխիկ ապականութեանէն:

գրականութեան համար: Ասիկա ինքն ալ հասկցաւ, վե՛րջապէս, Անանիսի Ա. թիւին մէջ երեւցած իր գրական գերագոյն ճիւղին չափը սուսող Յաւիճ Տունին ստօթալի ֆիլասփօն վերջը: Աւ երկու տարիէ ի վեր կը ջանայ ներկուս մտածող-հրապարակագրի համբաւ մը շինել ինքզինքին՝ իր չգիտցած ու չգիտնալիք, չհասկցած ու չհասկնալիք բոլոր նիւթերուն վրայ սուսուալն քոսն էջ յօդուածներ աշխատասրօքէն վիտելով:

Այդ նոր ճամբան գիւրին ու սպանով կը թուէր իրեն մինչեւ վերջը ու՛ յաղթական փախտ մը գէմքին վրայ՝ Ա. Չօպանեան կ'երթար անկից ցաթկուսելէն: Բայց հոս ալ յանկարծ իր գիմացը կ'եղլեմ ու ձեռքս իր ընկերաբան-իմաստասէր-քաղաքագէտ-գեղեցկագէտ-ամենագէտ հրապարակագիրի օձիքին կը դնեմ:

Մեծ ու փոքր յատուկ անուններու անխնայ ու այլանդակ յիշատակումներով իր յօդուածները ծանրաբեռնող ու իրերուն, մարդերուն եւ մտածումներուն առջեւ՝ հոյակապ ու մէկհատիկ Բօլ Ատանին (1) — զոր չի ճանչնար, ինչպէս չի ճանչնար՝ զինքը այնքան լաւ ճանչցող (?) Անտիթօլ Ֆուանսը — արեգեակաւ հասկացողութիւնը կապիկը նկրտող դաճածը չի կրնար անշուշտ ներել ինձի՝ գրական հրապարակին վրայ գեռ սեւելոս, գեռ ապուշները շլմորելու համար իրեն մնացած այդ վերջին ճարճարակը մտանելու:

(1) Բօլ Ատան անասնաման հետաքրքրութիւններու, հրակայ ընդհանրացումներու, հզօր համագրութիւններու ու շքեղ բառասօքներու հաճող ուղեղն է գերագանցօրէն ու միակ գրողը՝ Քրանտական արգի գրականութեան մէջ որ իր մտքին համայնագիտական արտակարգ հմտութեամբ կարող կ'ըլլայ՝ միւզիկ-հօլի բողի մը հրաշալի սրունքներէն սկսելով Թրանսփալի սլասերագմին կամ Մանչէսդրի կտուր արտածումին եղբակացնելու անհաւատալի արամբարանութեանը:

Բօլ Ատան — մտածումի այդ շուարեցնող վիտրիոզը — Պալզաքեան անվեռիխոտով վիպասան մըն ալ է միանգամայն:

Ա. Չօպանեան որ ատենէ մը ի վեր իր յօդուածներուն մէջ, երկու տողը անգամ մը, Սոփոկլէսն ու Եսքիլէսը, Կէօթէն ու Շէքսպիրը, Տանդէն ու Սէրվանթէսը, Թօլսթօյն ու Իպսէնը, Նիցչէն ու Էմէրսընը, Միշլըն ու Քարլայը, Հիւսիսն ու Հարաւը, Արեւելքն ու Արեւմուտքը վկայութեան կը կանչէ, Ա. Չօպանեան մանրագիտական ընթերցանութեամբ մարդ մըն է: Իր անուանած գրողներէն ինք տասներորդին անունէն զատ ոչինչ ծանօթ է իրեն ու մնացածներուն իւրաքանչիւրէն մէկ հատոր հազիւ քղրասած է:

Իրեն չեմ մեղագրեր իր զգուելի տգիտութիւնը: Այդ տղան իր գրելու, հրատարակելու դժնդակ կատաղութեամբը ու ապրելու իր շիւ մաքառումներուն մէջ ժամանակ չե ունեցած կարգալու, սորվելու, համբարելու: Անկարող իր հաշուոյն մտածելու — ինչպէս անկարող իր հաշուոյն զգալու — Ա. Չօպանեան՝ տարօրինապէս բռաթիք միտք մը՝ այլապէս յարմար դասած է Քրանտացի քննադատներու կարծիքներն ու մտածումները առնել ու՛ առաւել կամ նուազ վարպետ ու նոր դարձուածքով մը՝ ներկայացնել մեր հասկցող հասարակութեան, իբր իր աշխատութեան ու խուզարկութիւններուն արդիւնքը:

Պօլիս իրմէ զատ ամէն մարդ կը կարգար իր գնած գիրքերը: Բաւական ճոխ մատենագարան մը ունէր ուրկից իր բարեկամները մ'իայն կ'օգտուէին. ու ես անոնցմէ մէկը՝ չեմ ուղեր այս մասին հրապարակաւ իրեն երախտագիտութիւնս յայտնելու առիթը փախցնել: Բարիկ ալ, իր ամբողջ ժամանակը ազգին — այսինքն իր փորին — զոհելու սախուած՝ անկարելի եղած է իրեն, հինգ տարիէ ի վեր, հատոր մը բանալ. ու նոր էն իր բարեկամներն են — եթէ կարգալ գիտցող մը կը մնայ անոնց մէջ — որ կը կարեն իր նոր գնած գիրքերը, որովհետեւ Անանիսի նահատակը կարծես ներքին խորունկ ու չխոստովանուած խղճահարութեամբ մը, պէտք կը զգայ գիրքեր գնելու եւ՝ եթէ բնաւ չի կարգար գանոնք՝ գոնէ կ'ուզէ վճարած ըլլալ՝ անոնց վրայ խօսելու իրաւունքը անսխալութիւն ունենալու համար:

Չուտ գրականութենէ յուսահատելէն ի վեր, Ա. Չօպանեանի իմաստակութիւնը անարեկելի համեմատութիւններ առած է: Բայց արձակ անգիտակցութեան համնող ինքնամոռացութեամբ մը՝ ա՛լ չի բաւականանար, օրինակի համար, ելլալ հանդարտօրէն հաստատել թէ Նարեկացիին միսթիքական փիլիսոփայութիւնը — ինչպէս ըրաւ Պօլիս իր անմահ «Թորոյնալներ» ուղը Մամբեանի միսթիքական փերրաւմեքոն համար — «գիտական հիմ չունի (!)», այլ զոս զիսակն նիւթերու վրայ կը գրէ, անճառելիօրէն դաւեշտական լրջութեամբ մը: Այս «գիտական» խենդութիւնը այն աստիճան դարգացած է իր մէջ որ առանց խղճիխայթի ա՛լ ձեռնահաս կը կարծէ ինքզինքը խօսելու գիտական է՛ն կնճռոտ հարցին վրայ: Պիտի ուղէի որ իր Մանուէլեան բարեկամը լսէիք այս մասին իր արհամարհանքի անպատում չեշտովը որ զիս գինովցուցած է քանիցս:

— Երեւակայէ՛ անգամ մը, երեւակայէ՛, կ'ըսէր ինձի, աչքերը ակնոցներուն տակէն ուղորելով, երեւակայէ՛ սա ֆոքրեկին քուրքէն . . . Առանց ամչնալու կ'ելլայ ինձի անցածները կ'ըսէ որ՝ եթէ քիչ մը աւելի գիտութեամբ զբաղելու ատեն ունենար . . . ինքնիքն'ը պիտի գտնար իմ տարիներէ ի վեր տքնելով ձեռք ձգած արգիւնքներս . . .

Ու միամիտ ու դայթակղած մարդուկը գլուխը կ'երերցընէր արհամարհոտ ու սպառնալից . . . :

Բայց Մանուէլեան — բարոյական տիպար մըն ալ՝ որ հատոր մը կը պահանջէ բացատրուելու համար — կը ներէ հարկաւ իր հաճոյակատար բարեկամին այս պզտիկ ու զուարճալի յանդիմութիւնը: Անահիտի իր անունին շուրջը ձեռնարկած վիթխարի քիւրդիսթիքէն արգէն լայնօրէն կը բաւէ զինքը ներողամիտ ընելու:

Բայց մենք ի՞նչպէս չճաթինք խնդալէն երբ կը տեսնենք որ Անահիտի իր վերջին խմբագրականին մէջ Ա. Չօպանեան Մանուէլեանի «գիտական» վրայ խօսելով կը գրէ. — «Մասնագիտական չոր ու կարծր (օ՛ ո՛րչափ կարծր մանաւանդ!) ուսումնասիրութիւն մը կատարել (?) պէտք պիտի ըլլար որուն համար հարկաւոր ակրողջ (???) ձեռ-

նահասութիւնը չունիմ . . . » !!!

Բայց քանի՞նք՞ արդեօք կրցան, հայ ընթերցող հասարակութեան մէջ, ըմբռնել այդ «ամբողջ» բառին գերագոյն, անգիմադրելի, երազել տուող կատակերգականութիւնը:

Անոնց համար որ մօտէն ծանօթ են Ա. Չօպանեանի խորագլուխ մակարդակային զարգացումին ու չեն խաբուիր այն հմտութեան վեռնիէն որ կը ծածկէ անոր թանձր տըգիտութիւնը, հազուադիւրս զուարճութիւն մըն էր տեսնել՝ Անահիտի թղուկին Բօլ Ստանը կապկելու հղակտոր ելլալը:

Ու հիմա, հակառակ իր տասնէն քսան էջ բռնող աշխատալի տքնութիւններուն — որոնց իւրաքանչիւրին պարունակած ճղճիմ գաղափարը կարելի պիտի ըլլար ո եւ է երկրորդական գրողի կէս էջի մէջ ըսել, — հակառակ իր լեզու փոխելուն, հակառակ իր գրաբար հոլովներուն, հակառակ իր դասակն ըրրաշու խանդաղատեցուցիչ խնամքներուն՝ Ա. Չօպանեան ա՛լ հեշտանքը կը կազմէ հասկցողներու պզտիկ եղիքի մը որուն համար էքստրճիեանէն, Աբրահամ Այվազեանէն ու անբաղդատելի ճանկիւլեանէն վերջը — տարբեր ուղղութեամբ մը, բայց հաւասարապէս անգիմադրելի — անմիջապէս ինքը կուգայ՝ հայ գրականութեան ակալալ ու հանճարաւոր երգիծաբաններուն փառայեղ շարքին մէջ: Ա. Չօպանեան վարպետ մը հանգիստացաւ մէկէն ու իր անմահութիւնը տիրաբար սպահովեց գրական այդ նոր «ճիւղին» մէջ:

. . .

Այսպէս ուրեմն, ին՛զճ ինկած Այրօ, գիշեր մը ելար՝ աղջամուղջին կոյր ամայութիւնէն քաջալերուած՝ ունայն ու քանդուած փառքերուն գերեզմաննոցը գացիր, ու հոն, անկիւն մը ծունկի եկած՝ քու հաստ ու կարճ մասներով լուութեան ու մոռացումի հողը փորեցիր, փորեցիր, փորեցիր՝ գրականութեանդ գիտիլը զուրս հանելու համար: Կը յուսայիր — ու մօտեց սուլելով անցնող հովերը կը համն-

դէին քեզի յամառելու — թէ պիտի կրնաս ողջնցնել զայն :
 Խոնաւ, փտած պատանքը պատուեցիր ու դիակը կուրծ-
 քիդ վրայ պինդ սեղմած՝ բոլոր շունչովդ փչեցիր, փչեցիր
 երկարօրէն անոր շրթնաթափ ու լայնարաց բերնին մէջ :
 Դիակը չէր շարժեր ու անոր ցուրտ հպումը մարմինդ կը
 սառեցնէր : Իզո՛ւր համբուրեցիր զայն մութին մէջէն, ի-
 զո՛ւր մրմնջեցիր անոր գորովի ու պաղատանքի գերագոյն
 խօսքերը : Դիակը պատասխանեց քեզի մահացու գարշահոտով
 մը միայն զոր բուրաստանի մը պէս հոտոտեցիր :

Ու լոյսը ծագեցաւ յանկարծ ասոր վրայ, ու դուն լե-
 ղապատառ՝ բացած փոսիդ ու դիակին տեսքէն՝ վար նետե-
 ցիր զայն ու փախար հեւ ի հեւ գերեզմաննոցէն : Դուրսը,
 վաղեցիր, վաղեցիր ժամերով, ճամբադ կորսնցուցած ու
 թեւերդ անհունօրէն կարկառելով, սարսափած, խենդեցած
 մահապիղծ ձեռուրներէդ զորս պիտի ուզէիր դիակին քով
 ձգած ըլլալ :

Անկից ի վեր քանի՛ անգամ ուզեցիր ետ դառնալ, քա-
 նի՛ անգամ քայլերդ ուղղեցիր դէպի գերեզմաննոցը ունայն
 ու քանդուած փառքերուն : Բայց հոգեդարձային անձկու-
 թիւն մը շունչդ բռնեց ու քեզ պատէ ի պատ զարնելով
 խորտակեց կէս ճամբուն վրայ :

Գիտեմ որ այս էջերուն ընթերցումէն սիրտ առած՝ ամ-
 բողջ կորովդ պիտի գանաս, ու այս իրիկուն արիւար
 պիտի երթաս լուսութեան ու մոռացումի հողին մէջ գնել
 նորէն գրականութեանդ դիակը :

Մի՛ մոռնար պատանքել զայն՝ թաղելէ առաջ՝ Անա-
 ճիսիդ վերջին թիւովը, — իբրեւ յաւիտեանական սուգի մը
 համակերպութեան ուխտագրութիւնը :

Բ.

“ ԲԱՇԱԼԵԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ ”

Չպիտի ծանրանամ « Բաշալեան Երեկոյթին » մանրա-
 մասնութիւններուն վրայ, թէեւ շատ շահեկան բաներ պի-
 տի ունենայի ըսելիք այդ մասին : Չպիտի ծանրանամ այդ
 կէտին վրայ մահաւանդ այն պարզ պատճառով որ՝ ատիկա
 պիտի մղէր զիս գնահատելու՝ « Բաշալեան Երեկոյթը » կազ-
 մակերպող Բարիզի Ուսանողական Միութեան Դիւանին
 անդամներէն ոմանց, երեկոյթին յաջորդ օրը, Ա. Չօպան-
 եանի հանդէպ բռնած դեանագարշ տախտկութեան դիրքը
 ու իմ նկատմամբ ունեցած անորակելի վատութեան ա-
 բարքը : Չեմ ուզեր ծանրանալ այդ կէտին վրայ, որովհե-
 տեւ պիտի ստիպուէի խօսքը ընել դժպէի շրջաբերականի
 մը զոր այդ Դիւանին անդամներէն քանի մը տխուր արա-
 բածներ հարկ դատեր են ցրուել Բարիզի մէջ Ա. Չօպան-
 եանի ներողութեան արժանանալու ջերմեռանդ յոյսովը ու
 զիս « պախարակելու » սրտառուչ փութկոտութեամբը : Կ'ու-
 զեմ խնայել այդ սէգ երիտասարդներուն հրատարակումը
 մարդկային անարգութեան այդ հրէշաւոր ու լղբճուկ տօ-
 քիւմանին որուն տակ՝ սուր կոկիծը վերապահուած էր ին-
 ծի՛ պատանութեան սրտի ու մաքի ընկերներէս մէկուն ա-
 նունը կարդալու : Չեմ ուզեր — ու ձեռքս առաջ պիտի չեր-
 թար արդէն — երեկուան այդ սիրելի բարեկամիս բարո-
 յական անկումը արձանացուցած ըլլալ տպագրուած էջի
 մը յաւերժացումին մէջ :

Գո՛հ եմ որ այդ մասին Ա. Չօպանեան ալ թունդ լը-
 ութիւն մը պահած ըլլայ, թէեւ այդ կախառոր մոռացումը
 ողորմելի ճարտարութիւն մըն է իր կողմէն, քանի որ քիչ
 մը դժուար պիտի ըլլար իրեն պատրուակ մը գտնել ինծի
 դէմ իր յարձակումներուն՝ հրատարակութենէն վերջը այդ

չըջարերականին որ իրեն ամէն գոհացում կուտար յորդա-
նասորէն :

Ինչ որ զիս շատ խնդացուց՝ Ա. Չօպանեանի կեղծ մո-
լեգնութիւնն է այդ ամօթալիօրէն խմբագրուած մեղադա-
զիր-նախատագրին հեղինակներուն գէտ, որպէս թէ խեղճ
տղաքները մինչեւ յետին սողացումի խաղքութեանը հա-
մակերպած չըլլային իրեն հանգէպ իրենց դարմանումի
շուարումին մէջ : Ինչ որ է, իրենց գիտնալիք բանն է :
Ինծի չի յնար զիրենք պաշտպանելը : Երիտասարդ մտաւո-
րականներ ըլլալու յաւակնութիւնն ունին, ու իրենց պա-
տիւը կ'ընեմ են թագրելու որ իմ փաստաբանութեանս պէտք
չունին Ա. Չօպանեանի թունալից նախատինքներուն պա-
տասխանելու համար :

Բարիզի Հայ Ուսանողութեան պատիւը վրաս պարաք
կը գնէ սակայն չմոռնալ թէ ան փութաց քանի մը երկար
ժողովներու մէջ խնդիրը իր բոլոր ջրառներովը քննելէ
վերջ՝ « պարտաւանաց քուէ » ով մը հրաժարումի ստիպել
Դիւանին անդամները, ընկերութեան կնիքը իրենց աղ-
կաղկ հաշիւներուն ծառայող այդ շրջարերականին տակ պո-
նըկացուցած ըլալուն համար :

* * *

Երբ ինչ խնդրեցին որ բան մը կարգամ Բաշալեանի ի
պատիւ այդ երեկոյթին մէջ՝ սիրով ընդունեցայ. նախ՝ ո-
րովհետեւ չէի կրնար մերժել այդ կարգի ծառայութիւն մը
երիտասարդներու ընկերութեան մը որուն մէջ բարեկալներ
կը կարծէի ունենալ. երկրորդ՝ որովհետեւ ճշմարիտ հա-
ճոյք մըն էր ինծի՝ իմ Բաշալեան բարեկամիս հրապարա-
կային յարգանքի ու հիացումի այդ ցոյցին մասնակցիլը :
Բայց աւելին կար ինծի համար :

Ա. Չօպանեան Բաշալեանի հետ ունեցած իր « ութը
տասը տարուան գրական camaraderie շատ սիրուն յարա-
բերութիւններ » ու շրջանին ամէն բան ըրած էր, մութին
մէջ, նսեմացնելու համար « իր հին բարեկամին » գրական

գէտքը : Մէկէ աւելի են — ու կրնամ անուանել զանոնք —
որոնց ախանջն ի վար Ա. Չօպանեան կը փոխար տարի-
ներէ իվեր — « Բաշալեան » . . . հա' . . . բաներ մը գրած
է . . . բայց ծոյլ մը . . . տգէտ մը . . . ա'լ լմնցած մը . . .
ռաքե մըն է . . . եւն . . . » ու ասոր նման գողտրիկ նեն-
գութիւններ որոնք մասամբ յաջողեցան տկարացնել Բա-
շալեանի գրական բռնաթիժը մեր Պօլսոյ ու արտասահմանի
տիրացուական շրջաններուն մէջ : Այնպէս որ երբ Վաղարան
Չայնին մէջ առաջին անգամ հռչակեցի Բաշալեանի գրական
ճիւղին բովանդակ անզուգական գեղեցկութիւնը՝ Ա. Չօ-
պանեան ու իր ողբալի հիացողները կրցան, իրենց սովորա-
կան կոպիտ սկեպտիկութեամբը, ենթադրել թէ ատիկա բա-
րեկամական հաճոյակատարութիւն մըն էր լոկ իմ կողմէս :
« Բաշալեան Երեկոյթը » առիթ մը կը հայթայթէր ինծի
միանգամ ընդ միշտ ջրելու այս սամիկ կասկածը : Ու փու-
թացի օգտուիլ այդ առիթէն :

Բանախօսութիւնը զոր կարգացի « արդի հայ գրակա-
նութեան վրայ ընդհանուր տեսութիւն մը » չէ՛ր, ինչպէս
պիտի տեսնաք, այլ միմիայն բացատրութիւնն ու պա-
տասխանը սա տարամերժ հարցումին թէ՛ « Ինչո՞ւ Բաշալ-
եանը կը նկատենք իբրև վերջին ճասը տարիներու մեր
աշխարհաբար գրականութեան անխտակիօրէն մեծագոյն
վարպետը » : Ու ասիկա հաստատելու համար էր որ հարկ
տեսեր էի արագ տեսութիւն մը ընել ս'չ թէ « արդի հայ
գրականութեան » այլ միմիայն վերջին ճասը տարիներու
Պօլսոյ աշխարհաբար գրականութեան վրայ :

Հոս է որ Ա. Չօպանեանի անուղղամտութիւնը լրբու-
թեան կը հասնի :

Պիտի փորձուէի մտածել — ու այն ատեն հարկաւ նե-
րողամիտ կ'ըլլայի իրեն — թէ Ա. Չօպանեան յուզումէն
չէր կրցած ուշադրութեամբ մտիկ ընել կարգացածս ու բո-
լոր ըսածներուս մէջէն իր գրական մահը գուժող խուլ զան-
գակը միայն անոր ախանջներուն Շայլօքէն երգուած կրճիկը
ձեծած էր : Բայց գիտեմ ալ իր ստելու, կեղծելու հրաշա-
լի կարողութիւնը, ու գիտեմ որ աւելի ստել, կեղծել կա-

րող է ան նորէն քան յուզուիլ . . . :

Ա. Զօպանեան չէ՛ բաւականացեր խեղաթիւրե-
լով բանախօսութեանս միտքը, այլ պէտքը զգացեր է զայն
վերլուծելու եւ այդ առթիւ գրական քննադատութեան մը
պերճանքը ուզեր է վճարել ինքզինքին անպատում գոհն-
կութեամբ հատուածի մը մէջ ուր հինաւուրց « ըստ » երուն
պատուելիականութիւնը կը զուգաւորուի վաղնջական « յա-
ջըս » ներուն խաղքութեանը հետ :

Ա. Զօպանեան՝ յաղթական ապուշութեամբ մը՝ կը զար-
մանայ թէ Պօլսոյ վերջին տասը տարիներու գրական շրջա-
նին վրայ խօսած ատենս յիշած չըլլամ Միսաքեանը, Պէ-
շիքթաշեանը, Գուրեանը, Ալիշանը (Վենետիկ!), Մա-
մուրեանը (Իզմիր!), Գրիգոր Օտեանը, Պարոնեանը :

Զմայլելի չէ՞ ասիկա : Ու թերեւս զարմացաք քիչ մը
թէ մոռցած ըլլայ նարեկացին որ կարծեմ ԾՅի Չարգերէն
քիչ առաջ մեռաւ Պօլիս, Յակոբեան խանին վերնայարկը :

Ա. Զօպանեան կ'ուզէ որ անպատճառ ըսած ըլլամ թէ
Արփիարը « անկատար ու անճարակ » գրագէտ մըն է, բան
մը որ իմ մտածումս չէր կրնար ըլլալ : որովհետեւ — հա-
կառակ իր գրա-գեղեցիկագիտական տգիտութեանը, հակա-
ռակ իր ոճին յաճախակի տախիլութեանը — Արփիարը կը
նկատեմ մեր քանի մը մատի վրայ հաշուուող գրողներէն մէ-
կը որ նոր բան մը բերած, իսկապէս եղած ու տաղանդ
ունեցած են : Այդ միջակ արձակագիրը որ ողբալի վիպող
մըն է՝ վեռվով լեցուն քրոնիկներ գրած է — ինչ որ քիչ
բան չէ — ու քանի մը հեգնութեան անմոռանալի էջեր՝ ու-
րոնք ուրիշ բան են քան Պարոնեանի գիւրին խեղկատա-
կութիւնները ու Ե. Օտեանի տաժանելիօրէն սրամիտ տըք-
նութիւնները եւ ուր Արփիարի ծաղրը գինով քերթողի մը
խնդուքին սքանչելի խոյանքը կ'առնէ : Իրմէ վերջը, նո-
րերուն մէջ, Շայլօքը միայն բերաւ նոյնքան քնարերգա-
կան ու շատ աւելի նուրբ, աւելի խորունկ ու թելադրա-
կան հեգնութիւն մը :

Ա. Զօպանեան ոչ նուազ յաղթական ապուշութեամբ մը կը
գարմանայ թէ Բաշալեանին, Զօհրապին ու Հրանդին հետ

յիշած չըլլամ նաեւ Յ. Շահնազարը, Ե. Օտեանը, Տիգրան
Կամարականը, Վահրամ Սվաճեանը եւ Տիկին Մարի Սը-
վաճեանը :

Յ. Շահնազարը գրագէ՞տ : Բայց երբէ՞ն իվեր գոյու-
թիւն ունի այս անհեթեթ աւանդավէպը : Յ. Շահնազար ռա-
քի փաստափան մըն է որ օրին մէկը խելացի գաղափարը ու-
նեցաւ իր խնայողութիւնները գործածելու թերթի մը հիմ-
նարկումին, Արփիարի ու Բաշալեանի խմբագրութեամբը,
որոնք ժամանակակից տաճկահայ լաւագոյն գրողներու աշ-
խատակցութեամբը վեց տարի ազգային վերածնութեան ար-
գաւանդ ու գեղեցիկ ճիգ մը փորձեցին : Յ. Շահնազար կըր-
նար բաւականանալ Հայրենիքի հրատարակիչը ըլլալու պա-
տիւովը ու շահաւոր ձեւնարկի մը տուած շօտփելի գոհու-
նակութեամբը : Բայց չէ՛, այդ ռաքի փաստափանը (ի՛նչ
հաճոյք մը կայ երբեմն կրկնելուն մէջ!) ուզեց գրական համ-
բաւ մը շինել ինքզինքնին « թղթախաղ » ի ու « ամուսնա-
լուծութեան » վրայ, « մոլեռանդութեան » ու « նախապա-
շարունակութեան » գէմ անդրջրհեղեղեան փիշիկներ ու պատկառե-
լի յաքալիսաներ մէջտեղ նետելով իբրեւ բարախուն նորու-
թիւններ : Գիտե՞ն արդեօք Բաշալեան ու Արփիար թէ ի՛նչ
ապուր մը կերան քիչ շատ հայերէն գրել սորվեցնելով այդ
անտանելի մարդուկին զոր Ա. Զօպանեանի պէս շոշորներ
անպարեցին մտածող, ընկերաբան, հրապարակագիր,
գրագէ՞տ հուշակելու :

Թէ ի՛նչու չյիշեցի Ե. Օտեանը : Պատասխանս կ'ընտոս
չէ շատ : Ե. Օտեանը չյիշեցի, որովհետեւ — իր քիթին
չափ մեծ « Մ » ով — Միջակ մըն է : Իմացայ որ ինքն ալ
գայթակղեր է Բաշալեանին, Զօհրապին ու Հրանդին հետ
իր անունը յիշատակած չըլլալուս : Ա. Զօպանեանի ծառա-
յութեանը մտնելէն իվեր քուպիկն չէ որ կը պակսի իրեն
ապահովարար : Ե. Օտեան ուրիշ բան չէ՛ գրականութեան
մէջ եթէ ոչ բաւական տաղանդաւոր հուպիտ մը, ամբոխի
զուարճարար մը : Ե. Օտեան երբէք հեգնող մը չէ եղած այլ
հասարակ սրաւիտ մը : Իր ծաղրը երբէք չէ հասած հզօր ու
մտրակող քնարերգութեան մը, այլ րեկն-սակ-ոխի ներս

դարձած ծամածռութիւն մը եղած է միայն : Անշուշտ բաւական շիրիմ բաներ մը գրեց վերջին տարիներս , բաւական խնդացուց մեզի , բայց թող չեւլլայ յաւակնել թէ բազմատութեան եզր մը կարելի է իրեն ու Ջօհրապի պէս գրողներու միջեւ : Բարձրագոյն արուեստ մը փորձելու փառասիրութեամբ, Նոր կեանքին ու Անանիոսին մէջ, իր կարճ շունչովը, իր չոր ու տափակ արձակովը — որուն քով Արփիաւրինը շքեղութիւն մըն է — քանի մը յուզումի էջեր ու քանի մը ցաւատանջ կեանքի պատկերներ լղրճած ըլլա՞ն է որ կուտայ կոր իրեն այդ յանդգնութիւնը : Ես պատուական աղաքներ կը ճանչնամ որոնք հազիւ կարգաւ գիտեն , բայց որոնք ամբողջ օրը տատելէ վերջ իրիկուան երբ Նոր կեանքի ու Անանիոսի նոր թիւ մը կը բանան ու իր անունը չեն գտնար՝ մէկգի կը նետեն թերթը՝

— « Է՛հ , նալլէթ , կի՛նէ Օտեան չիկայ » մրմնջելով :
Ասիկա չի՞ բաւեր իրեն :

Տիգրան կամարականը անշուշտ պատուաւոր տեղ մը ունի Պօլսոյ աշխարհաբար գրականութեան մէջ : Ջղուտ ու ֆօնեֆո գրող մը եղած է , հաղուագիւտ արհաւիրքը ունեցած է հասարակին , տափակին , ըսուածին ու մէկ քանի աղէկ յղացուած ու մագիստրոսաբար գիտուած ու պրպտուած էջեր շարագրած է որոնք կը մնան , ինչպէս « Հովկուրը » , « Ջրհանը » , « Ճէվիզին » եւն : Բայց իր գրական գործը յարաբերաբար նիհար է : Գրականութիւնը ալիքթանթէի ժամանց մը եղած է իրեն , եւ եթէ ախրական իտեալ մը չէ մղած զինքը՝ հզօր իսկատպութեան մը գրողին ալ չէ որոշած իր արուեստը :

Սվաճեաններուն վրայ չպիտի ծանրանամ : Տասը էջ պիտի ստիպուէի գրել : Տիկին Սվաճեանը միշտ թուած է ինծի շատ հետաքրքրական խառնուածք մը գոր իր զաւակը պէտք եղածին պէս չէ կրցած շահագործել դժբաղդաբար : Աւելի ձեռննաս աշխատակից մը հրաշակիրաներ պիտի կըրնար արտագրել անոր թելադրութեանը տակ : Բայց Վ. Սըվաճեան այդ գործին մարդը չէ՛ : Երբէ՛ք տրուած չէ ինծի տեսնել տաղանդի ու անկարողութեան ատանկ տարօրինակ երկրութիւն մը : Երբէք գրող մը այնքան հոյակապ յղա-

ցումներ այնչափ ողորմելի անճարակութեամբ մը չէ մնտած : Չեմ գիտեր ի՞նչ է որ կը պակսի իրեն երբեմն կատարեալ ըլլալու համար : Մէկ քանի անգամ մաղ մնացած է որ մօտենայ ատոր : Ու գրեթէ միշտ գեղեցկութեան աւերիչ մը եղած է : Իր արձակը որ շատերը կը զմայլեցնէ — ու այս կէտին չենք կրցած համաձայնիլ Բաշալեանին հետ — զիս կը ջղագրողէ ու կը քստմնեցնէ իր տարապայման թափթըփածութեամբը : Ջիզի ու դնդերի պակաս մը՝ որ յորդառատութիւն մըն է յաճախ : Գրեթէ յաջող ֆռագի մը քով հըրէջօրէն տափակ հատուած մը որ անգունդներէ վար կը գըլորէ քեզի : Կ'ուզէի ըսել իրեն թէ հաղարաւոր դրաբար ու գաւառական բառեր գիտնալը չի բաւեր շնորհքով արձակ մը գրելու համար , թէ մէկ երկու հոգի կը ճանչնամ որոնք գրեթէ հայերէն չեն գիտեր եւ որոնց արձակը իրենին հետ չի բազմատուիր : Պէտք չունիմ աւելցնելու թէ արտասանման հաստատուելէն իվեր Վ. Սվաճեան տող մը չէ գրած գոր կարելի ըլլայ կարգալ : Ու կը ներէք անշուշտ որ իր ստանաւորներուն խօսքը չընեմ :

Բայց ուր որ Ա. Չօպանեանի անուղղամտութիւնը տըղմուտ ու շնական ցածութեան կը հասնի՝ հոն է , երբ՝ բանախօսութիւնս վերլուծելու համոզուած ձեռով մը կ'ելլայ յայտարարել թէ՛ « ուստահայերը անբաններ նկատուած են » Բաշալեանի , Ջօհրապի ու Հրանդի շրջանը որոշող հատուածիս մէջ : Արդ , Ա. Չօպանեան գիտէր որ ուստահայ գրականութեան (որուն համար սիրտս հեռու է բարպտելէ !) խօսքը ո՛չ միայն չեմ ըրած , այլ մտքէս անգամ չէի կրնար անցնել ատիկա , տրուած ըլլալով որ Պօլսոյ քաղաքումն աշխարհաբար գրականութեան վրայ միայն սահմանափակած եմ տեսութիւնս , ու ասիկա պէտք եղածէն աւելի շեշտած եմ « ճառ » իս մէջ : Պիտի տեսնաք արդէն այն միջանկեալ ու մասնակի ֆռագ որ առիթ տուեր է Ա. Չօպանեանին տօնքիջօթական մոլեգին պաշտպանութիւն մը հասցնելու ուստահայերուն : Ի՞նչու այդ պոչաւոր սուտը եւ ի՞նչու այդ աճապարանքը ուստահայերուն համար կեանքը վտանգի դնելու , արիւն թափելու , նահատակուելու : Ա. Չօպանեան գիտէ որ այն

« գործը չգիտցող » խենթերէն եմ ես որոնց համար նշանակութիւնն չունի ո եւ է անտեսական (?) նկատում: Ա. Զօպանեան գիտէ որ շատ դիւրութեամբ պիտի մխիթարուէի — ինչպէս ամէն բարեկամութիւններուն — ուսանաչերուն ալ բարեկամութեան պակասէն: Բայց ի՞նչու գահնկերը յանձն կ'առնէ զիս բռնի « գէշ մարդ ընելու » անոնց հետ: Ի՞նչ կը յուսայ դեռ անոնցմէ: Կը կարծէ՞ որ Առաքելեանին հանգանակութենէն վերջը ալ ողորմին դեռ իրեն: Երանի՛ թէ ատանկ ըլլար: Բայց կարծեմ ա՛լ չպիտի տան:

Չը՛-պի՛-տի՛-տա՛ն. . . ինչպէս աղջիկ չպիտի տան — հակառակ անոր ազաջաւոր դիմումներուն ու հակառակ Յ. Շահնազարի վեհանձն ու փութկոտ խլախղորքեան — իր հէգ Մանուէլեան բարեկամին:

Չը՛-պի՛-տի՛-տա՛ն. . . խրատ չեղա՞ւ իրեն, այս ամառ, երեք անգամ Պ. Մանթաշօֆին դիմելով՝ երեք անգամ դռնէն մերժուիլը, հակառակ երրորդ անգամուն Արմէնայի (որուն այնքան շքեղօրէն Լէօն Պլուսայի հանձարը յիշեցնող հոյակապ դիրքն ալ չմոռցաւ լղբօն վայրագօրէն իմաստակ քննադատականով մը, որպէս թէ ատո՛ր համար վճարուած ըլլար Տիկին Նէրիման կնանէն!) հակառակ Արմէնայի իրեն ընկերացող յանձնարարականին: Իբրաւ է թէ դուռին ետին Պարոն Մինաս, իր հաւատարիմ ծառայի քօսթիւռին մէջ բարեւ բռնած կը սպասէր եւ արդէն շատոնց պէտք եղած միջոցները ձեռք առած էր — մրցակիցի մը իր հացին սպառնացող վտանգէն խնդրեցած — Ա. Զօպանեանի մուտքը անկարելի ընելու համար:

Չը՛-պի՛-տի՛-տա՛ն. . . եթէ շատ շատ, ատենը մէյ մը, կողկասէն նաւթի ոսկելիք վաճառական մը Բարիզ իյնայ եւ ուղէքի մը անառկանալ՝ պիտի կրնայ իր ծառայութիւններուն դիմել Բարիզի « նիւմեո ութ » երը առաջնորդուելու համար: Այդ պարագային կրնայ հարկաւ առաւել կամ նուազ իւղոտ բռնապառառի մը սխրալի « յոյսը սնուցանել »:

Հիմա կարծեմ ճիշդ ատենն է որ ճառս կարգաք, այն անխնամ, գրեթէ կցկոտուր վիճակին մէջ որ ես կարգացի գայն « Բաշալեան Երեկոյթին »: Ահաւասի՛կ:

« Պարոններ ,

« Ուսանողական Միութեան բարեկամներս՝ Լեւոն Բաշալեանի շուրջը իրենց խանդավառ հաւաքումին մէջ հրաւիրած ըլլալով զիս քանի մը խօսք ընել՝ չեն սպասեր անշուշտ որ հանդիսաւոր ճառ մը կարգամ իրենց: Եթէ ասիկա տխուր ու ռամիկ հարկ մըն ալ ըլլար, ուրիշ պարագաներու մէջ եւ ուրիշ անձնաւորութեան մը հանդէպ, կը խոստովանիմ որ՝ մտաւորական ողբալի անբաւականութեամբ մը՝ պիտի չկրնայի բնաւ հասնել պաշտօնական ճառին անողորք միջակութեանը: Ընդհակառակը, ճշմարիտ հաճոյքով մը ու մաքի շատ համակիր արամադրութեամբ մըն է որ այս իրիկուն ճառախօսի բացառապէս տանելի քօսթիւռին մէջ կը գտնամ ինքզինքն:

« Այն քանի մը արագ ու անխնամ խօսքերով զորս ձեռքի պիտի ըսեմ՝ յաւակնութիւնը չունիմ կատարեալ ու ամբողջական ուսումնասիրութիւն մը ըրած ըլլալու Բաշալեանի գրականութեան վրայ: Արդէն՝ եթէ հաշտուէի ալ պահ մը այդ բառին հետ — որ ճառին չափ ու թերեւս աւելի անախորժ է ինծի — չպիտի կարող ըլլայի պէտք եղած վըստահութեամբ ու առատութեամբ խօսելու, չունենալով ձեռքիս սակ ստուար մաս մը օրաթերթերու եւ հանդէսներու մէջ տարողնած Բաշալեանի արձակէն: Այնպէս որ մանրամասնութիւններու վրայ չպիտի ծանրանամ ու ոչ մէկ սիրաւի՛ն պիտի ընեմ: Պիտի բաւականանամ միայն — ու ասիկա է արդէն կարեւորը ու համադրական եզանակն է որ կը նախընտրեմ գրականութեան ու մանաւանդ գրական քննադատութեան մէջ, — պիտի բաւականանամ ուրուագծելով Բաշալեանի գրական մաքուր ու խրոխտ գէժքը, իր լայն ու էական դիմերուն մէջ, վերջին տարիներու մեր Պօլսոյ աշխարհաբար գրականութեան մութ ու աւրշուտած ֆօնին վրայ:

« Անմիջապէս ըսեմ ձեզի թէ՛ ձեր այս իրիկուան հաւաքումին տարօրինապէս թելագրական ու համակրական մտածումը պիտի ըլլայ մեկնակէտս: Տարակոյս չունիմ որ ձեր ափնուն զգացումները թարգմանած կ'ըլլամ ըսելով թէ

արաստովոր ու սրտառուչ ու յատկանշական բան մը կար
 այն խանդավառ փութկոտութեան, այն միաձայն ու ինք-
 նաբեր ու բուռն համակրութեան մէջ որով փափաքեցաք
 շրջապատել Բարիզէն անցնող հայ գրագէտ մը — Բաշալեանը :

« Որչափ որ սխերիմ թշնամի մը ըլլամ՝ յանդուգն ու
 վիթխարի ընդհանրացումներու, չեմ կրնար հոս խուսափիլ
 մէկ հատէ մը՝ որ տիրականօրէն կը հարկադրուի մտքիս վը-
 րայ : Իմ սերունդիս երիտասարդներուն մէկ միւսիթարական
 մտքի վիճակը կը համարձակիմ տեսնել Բաշալեանի գրակա-
 նութեան համար անոր ցոյց տուած անվերապահ հաճութեան
 մէջ : Ասիկա ճշմարիտ ու կարեւոր կայք մըն է մեր գրա-
 կան մանրագիտական պատմութեան մէջ, է՛ն չքեղ ու սըբ-
 տապնդող երեւոյթը տարօրինապէս կանխահաս ու անհան-
 դարտ սերունդի մը որ երկար ու տենդոտ խաբխափումնե-
 րու, անստոյգ, վնասակար ու խաբեբայ թելադրանքներու
 մէջ անգիտակից ու անխուսափելի շուարումէ մը արթնցած՝
 իր մտաւորական վերջնական ազատագրումին լուսաւոր ճամ-
 բան կը թուի սկսիլ : Անհարազատ, անկեանք ու անպար-
 կեշտ գրականութեան ու անոր պզտիկ ու շինձու ու ծա-
 խու սիրունութիւններուն հետ խզումէն վերջ՝ ջերմեռանդ
 ուխտաւորումն է ասիկա դէպի գրական բարձրագոյն ու ազ-
 նուական խեղալ մը, դէպի փառաւոր յղացումը ուժով,
 անհենդ ու հպարտ արուեստի մը, դէպի խորանը կենսատու
 ու մարդկային մտածումի մը :

« Ասիկա մէկհատիկ ու հոյակապ շարժում մըն է, ու
 փոխանցումի շրջանը արդէն անցած կը թուի ըլլալ, քա-
 նի որ ամենքն ալ գերազանց գիտակցութեամբ մը կարող
 կ'ըլլան կոր անդրադառնալ իրենց երէկուան ու այսօրուան
 մտայնութիւններուն վրայ : Այս կազմուցիչ հաստատումը
 ըրած ատենս չեմ կրնար սակայն չնկատել թէ մեր գրակա-
 նութեան այս սքանչելի բարեշրջումը արտասահմանի մէջ
 միայն, ազգային է՛ն եղերական օրերուն վաղորդայնին
 կատարուեցաւ, ու հեռուէն, դժնդակ կակիծով մըն է որ
 հանդիսատես եղանք՝ մեր երկրին մէջ. մեր մտաւորական
 մակարդակին չարաչար ու գահալէժ անկումին : Երբէ՛ք

ինքնատիպ տաղանդի ասանկ դժխեմ — գրեթէ . . . հայկական
 — սով մը չէր տեսնուած, երբէ՛ք Պօլսոյ լրագրական ու
 պարբերական գրականութիւնը այնքան չքաւոր ու այն-
 քան գարշելի չէր եղած որքան 3-4 տարիէ ի վեր, յորմէ
 հետէ ազգին է՛ն տիրական ու է՛ն խոստացող ուժերը ար-
 տասահման թափեցան : Հոն մնացող երիտասարդներուն հա-
 մար մանաւանդ աղէտաւոր եղաւ ասիկա : Այն տխուր տի-
 րացուներու լէզէոնները որոնք կուրծքերնուն վրայ իրենց
 յուսահատ ֆօքին հոգեւին սեղմած՝ ձեռիճեի Շարֆիեի խըմ-
 բազրատան պատահաններուն տակ կը հառաչէին, եղերա-
 կան նայուածքներ աշտարակելով դէպի վեր — Ստոմին բա-
 ուովը ! — հիմա Պօլսոյ գրական հրապարակին հերոսներն են
 եղած : Չարաշուք իմաստակներու ուրիշ խումբ մըն ալ —
 որոնցմէ ոմանք Եւրոպայէն անցնելու զանձեքն ալ յանձն
 Պօլսոյ օրաթերթերը կը լեցնեն խուժուած անբանութիւն-
 ներով : Ու մէկ քանի ժողովրդական անուններ որոնց հըս-
 կայ ոչնչութիւնը չէինք հասկցած Պօլիս — ուր արդէն շատ
 քիչ բան կը հասկնայինք — հիմա մեզի կը շուարեցնեն ի-
 կարողութեան քստմնելի անարգութեամբը :

« Արտասահմանի մէջ ուր կեանքի տաժանքը անխնայ
 հալածեց զայն՝ ամբողջ արմատախիլ երիտասարդութիւն մը
 գրական նոր ու լաւագոյն խեղալի մը իրականացումին ու
 դրեցաւ : Այն ահաս, կեղծուած, նախապաշարուած հաս-
 կացողութիւնը զոր Պօլիսէն բերած էին՝ հրաշալի արագու-
 թեամբ մը զօրացաւ արգաւանդ ու խիթանող միջավայրերու
 մէջ, ու անոնք ինքզինքնին սախլուած զգացին կռնակ զար-
 ձրներու երէկուան մանկական համոզուներու ու վերջնա-
 կան կարծուած գաղափարներ մէկիկ մէկիկ աւրուեցան ա-
 նոնց մտքերուն մէջ :

« Ու եղան որ միղաչեցին իրենց այս տարապայման
 ու ճակատագրային փութկոտութիւնը . . . սխալ կարծիք
 փոխելու : Ուրիշներ — օ՛քնքուչ հողիները — չարակամու-
 թեան եւ ուրացումի ամբաստանութիւններ տաժանեցան

նետեղ անոնց վրայ: Բայց տարիկա պէտք էր որ ըլլար ու եղաւ ու ուրիշ կերպով չէր կրնար ըլլալ: Եւ եթէ երէկուան մեր գրական փառաւոր անուաներէն ոմանք իրենց բռնաբիծը կորսնցնելու տխրութիւնը ունեցան — օ՛ այս երիտասարդ եղիթին վրայ միայն, որովհետեւ, թո՛ղ ասոր ապահով ըլլան, ժողովուրդը ու Անմխիթար միաբանները միշտ պիտի զմայլին անոնց վրայ՝ — ուրիշներ որոնք բաւական չէին հասկցուած ու քիչ մը շատ անտեսուած՝ արդար ու ոգեւորիչ գոհացումը զգացին երիտասարդութեան սէրն ու հիացումը իրենց ունենալու:

* *

«Այս բոլորը կ'ըսեմ, որովհետեւ անոնք անհրաժեշտ կը թուին ինձի իր անքօղ ու սրայծառ ձեւին մէջ ներկայացնելու համար՝ Բաշալեանի գրականութեան ձեր մէջ արթնցուցած խանդավառութիւնը: Կը մնայ ինձի — եւ ուրիշ բանի համար չէ, կարծեմ, որ պատիւն ըրիք ինձի խօսք տալու այս գիշեր — հաստատել թէ ձեր այդ խանդավառութիւնը անորոշ թեւադրանքներու, անխոստովանելի հաճոյակատարութիւններու վաղանցուկ հետեւանքը կամ գրական տեսակ մը քմահաճոյքի ու նորաձեւութեան ունայն խաղ մը չէ՛, այլ խորունկ ու գերազանցօրէն գիտակից ու հասուն մտածումի մը, տիրական հասկացողութեան մը ու պողպատէ համոզումի մը հաստատումը:

«Ուրեմն պէտք է ըսեմ թէ ինչո՞ւ ամենքս ալ — առանց խղճիխայթի — Բաշալեանը կը նկատենք իբրեւ վերջին տասը տարիներու աշխարհաբար գրականութեան անփխտելիօրէն մեծագոյն վարպետը:

«Այս բիրտ ու միամիտ «ինչո՞ւ»ին պատասխանելու համար ինձի պէտք պիտի ըլլար թերեւս վեջին տասը տարիներու մեր աշխարհաբար գրականութեան պատմութիւնը ընել, բան մը՝ ուրիշց կ'ըմբռնէք որ զգուշանամ, տրուած ըլլալով որ ասանկ հապճեպ ու առանց սեւ է ընադրի պախճե կղած քանի մը էջերու մէջ անկարելի է ատիկա: Կարգ

մը անուաներ ու գրական գպրոցներ պիտի յիշեմ սակայն որոնք ինձի համար այդ պատմութիւնը կ'ամփոփեն ու համադրական գաղափար մը կուտան անոր վրայ: Կը յուսամ որ ներողամիտ կ'ըլլաք իմ ակամայ հակիրճութեանս: Ըսի արդէն որ ուսումնասիրութիւն մը պատրաստած ըլլալու յաւակնութիւնը չունիմ, ո՛չ ալ փափաքը ձեր ամենուզ գիացած բաները կրկնելու:

«Երեք գլխաւոր մասերու պիտի բաժնեմ այս տասը տարւան շրջանը. — 1^օ հոկտոբրական գրականութեան ակնարկը. 2^օ իրապաշտ գրականութիւնը. 3^օ ու՛ ինչ որ ես պիտի կոչեմ՝ Անորակելի գրականութիւնը:

«Չպիտի ծանրանամ հետորական գրականութեան վերջի շրջանին վրայ որ մասնաւորապէս Հասգիւղի գպրոցովը մեզի տուաւ քանի մը մեծածխոր պարապութիւններ ու տաղանդաւոր ռաթի մը — Եղիան:

«Իրապաշտ ձգտումը որ հետորականէն անմիջապէս վերջը կուգայ մեր գրականութեան մէջ՝ Ֆրանսական վէպին ուղղակի ազդեցութեան տակ՝ սկսաւ, կարծեմ, Արփիսարի ֆանի մը միջոց, ջրեղար հաւնար ողբայիլիպակներովը (որովհետեւ գրական ներքին արժեքեւ աւելի նոր արուեստի մը շատ քանկագին միջոց պէտք է գնահատեմ ակունց մեջ) իրապաշտ գրականութիւնը սկսաւ Արփիարի վիպակներովը ու իր է՛ն կատարեալ զարգացումին հասաւ 1889ի Մասիսին մէջ: Արփիարին հետ կամ անկից քիչ վերջը արդէն Չօհրապ հրատարակած էր իր Անհետացած Սերունդը ու Բաշալեան Արեւելիի ու Մասիսի մէջ իր սկիզբները ըրած: 1889ի Մասիսի շրջանը է՛ն փառաւորն է ապահովաբար Պօլսոյ աշխարհաբար գրականութեան: Ու չպիտի քաշուիմ ըսելու թէ մեր մէջ նմանը չտեսնուած գրական շարժում մըն էր աս ուր գրեթէ առաջին անգամ ըլլալով իրարցեկ գրականութիւն, մարդկային գրականութիւն մը եղաւ:

«Հետորական գպրոցին կիսաստուածներուն վերջալոյսն էր ատիկա: Դեռ չէին գլորած անոնք իրենց պատուանդաններէն, բայց անողոք ու մահացու սարսուռ մը իրենց ողիմպական թմբութիւնը կը վրդովէր: Արդէն Արփիար

սկսած էր իր ամպարիշտ ինդուքը թօթուել անոնց շուրջը : Ու հերարձակ բացազանչութիւններուն , ձայնի վէտվէտուն ու հոյակապ քոնեօջոններուն , մէջքի շնորհալի կտորառութենքուն ու կուրծքի վսեմ ծառացումներուն առջեւ՝ վարանոտ , բայց ինքնաբեր ժպիտ մը արդէն սկսած էր ուրուագծուել գրասէր ողբալի հասարակութեան մը գէմքին վրայ :

« Բայց այս իրապաշտ շրջանը երեք հոյակապ անուններու մէջ է որ իր զարգացումի է՛ն գերազանց աստիճանին կը հասնի , — Բաշալեան , Զօհրապ , Հրանդ :

« Այս երեք գէմքերն են որ տիրականօրէն կուզան մեր մտածումին առջեւ երբ այդ շրջանին վրայ կը խորհինք , երեքն ալ տարբեր ու սքանչելի գրագէտի խառնուածքներ՝ իրենց մէջ կը համադրեն բոլոր այդ շրջանին գրական գործունէութիւնը , ու մինչեւ վերջը այդ երեք անուններն են զորս կը կրկնենք ու կը կրկնենք ամէն անգամ որ Պօլսոյ աշխարհաբար գրականութեան վրայ խօսինք , որովհետեւ պարկեշտ միջակութիւններու ու անպատկառ ոչնչութիւններու ախուր ու վաղանցուկ հոսանքին մէջ անոնք միայն կանգուն կը մնան ու կը տեսնն իրենց արուեստին հզօր ինքնատուութեամբ :

« Անոնցմէ վերջը ու անոնց քով անորակելի գրականութիւն մը ծաղկեցաւ : — Գէշ հասկցուած ու մանաւանդ շատ գէշ կապկուած ֆրանսական արդի գրականութեան ֆառիֆարիտն էր ատիկա : Բաշալեանի , Զօհրապի ու Հրանդի հիւթեղ , կաղբուրիչ ու մարդկային գրականութենէն վերջը այդ շինծու , անյօդ ու անհարազատ արտադրութիւնը գրական նոր ուղղութեան մը անհասկանալի համեմատութիւնները առաւ : Եստ մը յորջորջումներու հետ որոնք արուեստից անց այդ նոր շարժումին՝ մասնաւորապէս կը յիշեմ « արուեստագէտ գրականութեան » ախորոսը ; — ամենէն անճիշդը ապահովաբար , որովհետեւ ֆօնին անարեկիչ չքաւորութենէն աւելի ֆօռմին անճոռնիութիւնն էր մանաւանդ որ կը յատկանշէր զայն : Զօհրապէն ու Հրանդէն վերջը որոնք գմայլելի արուեստագէտներ եղան ու սիրալի կատարելու-

թեամբ ձեւով մը գրեցին , Բաշալեանէն վերջը մանաւանդ — անոնցմէ ամենէն աւելի գրագէտը — որ աշխարհաբար իր գրեթէ վերջնական շքեղութեան հասցուց՝ այս « արուեստագէտ » ի մակդիրը չենք հասկնար այսօր՝ միւսներուն տրուած : Եւ սակայն մեզի ա՛լ չի զարմացներ այն տարբրինակ յաջողութիւնը որ ունեցաւ այդ անորակելի գրականութիւնը եւ որ գուցէ շատերու մտաւոր հեշտանքը կը կազմէ մինչեւ այսօր : Բոսօլոյի օլիւաֆիին յաւիտենական յաղթանակն է ատիկա՝ Ռամպրանդին վրայ , ու փայլուն ու պոռոտ բաներու աղաքներուն՝ ու — խոշոր բիւրագլուխ տղայ — անգրագէտ ամբօխին վրայ ըրած հրաշալի ազդեցութեան դասական օրինակը միշտ ճիշդ է :

« Ինչ որ կարեւոր է մեզի համար՝ սա ախուր հաստատումն է թէ ամբողջ ողբալի սերունդ մը Պօլսոյ դպրոցներուն մէջ ու անոնցմէ դուրս ու մինչեւ գաւառի խորերը ցաւագին խանդավառութեամբ մը վարակուեցաւ այդ սխալ ու սուտ գրականութեան փճացնող ազդեցութենէն , ու դեռ մինչեւ այսօր ապաքինումին յոյսը հեռաւոր ու անհաւանական է դժբաղդաբար : Որովհետեւ հիւանդութիւն մըն է աս՝ որուն դարմանումին համար Տիգրան Արփիարեանի ու Հրանտ Ասատուրի պէս ողորմելի բժիշկներ — իրենք արդէն ժառանգական անողոք ախտերէ զատապարտուած — չեն բաւեր , աւա՛ղ :

« Արտասահմանի մէջ — ուր այս խեղճ հիւանդ տղաքներէն շատեր՝ իրենց երկիրը , տունը տեղը քայքայող աւրիւնոտ աղէտքներէն փախստական՝ չկրցան ինքզինքնին արգիլել ամէն տեղ սունկի պէս բուսած թերթերու մէջ լեցընելէ իրենց սիրային եւ ուրիշ տեսակ զարաակութիւնները — արտասահմանի մէջ արդէն հակազդեցութիւնը սկըսած է :

« Ապահով եղի՛ք , իմ սերունդիս գրական երիտասարդութեան ներքողը չէ՛ որ պիտի ընեմ հոս , ո՛չ ալ անուններ պիտի յիշեմ : Գուք կը ձանձնաք արդէն զանոնք ու գիտէք այն թանկագին յատկութիւնները որոնց լուսապայծառ ապացոյցները տուին : Թող ներուրի միայն ինձի

ըսել թէ անոնց պիտի պարտինք մանաւանդ հայ գրականութիւնը իր այլասերումի ճամբուն մէջ կասեցնելու գերազանց ճիգը:

«Արտասահմանի մէջ գէպի ճշմարիտ գրականութիւնը եղած այս խանգով ու տաղանդով լեցուն վերագարձը կըրկին ու խորապէս շեշտեց Պօլսոյ աշխարհաբար գրականութեան երեք մեծ գէճերուն, Բաշալեանին, Չօհրապին ու Հրանդին կարեւորութիւնը. ու այս երեք սիրուած անուններէն մէկը — Բաշալեանը — մասնաւորապէս երիտասարդութեան մտաւորական խումբին առջեւ իր համակրութեան ու հիացումի առաջնութիւնը ունեցաւ, գերազանցօրէն մտատիրաբերով անոր գրական ու մտաւոր տենչանքներն ու ձգտումը:

«Չօհրապ, զմայլելի նրբութեամբ ու ապրած, գիտցող մարդու վրդովիչ ու խորունկ զգայնութեամբ գրող մը, որ հայերէն լեզուով է՛ն հրաշալի նորալէզերը ստորագրեց, Չօհրապ, որ սակայն շատ սրամիտ, շատ գուշակող ու գրական ծիծաղելիէն շատ զգուշացող միտք մըն է՝ տեսակ մը անգիտակից ու արհամարհոտ անձնաւստանութեամբ, հանգարտօրէն, գրեթէ հրճուանքով Պօլսոյ գրական օրագրութեան է՛ն մեծիակ, է՛ն անմոռանալի կափերը ըրաւ, քըննագատական՝ միշտ սիրուն դարձուած՝ բայց սխրալի անբաւականութեամբ յղացուած յօդուածներով: Ու նոր արդաքները որ իմաստակութիւնը չեն ներեր փութկոտութեամբ՝ քիչ մը սրամտեցան իրեն դէմ: Ասիկա աւելի շեշտուեցաւ վերջի տարիներս Պօլսոյ թերթերուն մէջ՝ իր — այնքան զգլխիչօրէն սպագրական խնամքով մը — ստորագրած առաջնորդող յօդուածներովը որոնց առաւել կամ նուազ սիրուն ձեւը չի կրնար ծածկել իր մտքին շըւււլիք պարապը:

«Հրանդի գրականութիւնը՝ անմոռանալի էջերով լեցուն՝ շատ միակողմանի, շատ անգիտակից, գրեթէ բնազդական — ատով իսկ աղուոր — շատ քիչ բարդ ու շատ սահմանափակ էր նոր սերունդին անհանգարտ ու լրախիզող մտաւորականութեանը համար: Հրանդ գաւառացի տգէտ

վարժապետ մը իր առոյգ ու վայրի տաղանդին ինքնասիրտ ուժովը մանաւանդ ու կախարդիչ ու տիրական գրելու եղանակովն էր որ յաջողեցաւ ու մեր հիացումը վայելեց: Բայց Չօհրապէն նուազ զարգացած՝ չէր բաւեր անշուշտ երիտասարդ ուղեղներու տենդոտ ծարաւին: Ու յետոյ, վերջապէս, գրողներ կան որոնց գրականութիւնը չի կըրնար միշտ մոռցնել իրենց անձը:

«Բաշալեանի գրականութիւնը իր ուժգնօրէն մարդկային նկարագրովը, իր տիեզերական ըմբռնումի խոհուն ու լայն բարդութեամբը, իր վերացումներու ու գաղափարականութեան հրապուրիչ ու թեւազրական հակումներովը, իրերուն ու մարդերուն իր արգաւանդ, ազնուական ու խորթափանց հասկացողութեամբը՝ ամենէն աւելի ու յաղթականօրէն պատշաճեցաւ այդ վայրագօրէն դժուարահաճ երիտասարդ մտաւորականներուն:

«Ու ինչ որ տեսան է՛ն առաջ Բաշալեանին մէջ՝ գրական պարկեշտութեան (probité littéraire) հպարտ ու ազնիւ օրինակն էր: Այս գրագէտը որ գրելու արհեստին բոլոր ունայն ու գիւրին ճարտարւորումները, բոլոր պզտիկ ու մեծ թռիչները գոց գիւտէր՝ իր ընթերցողները շըմորելու, երաքե ընելու ռամիկ մտահոգութենէն չփորձուեցաւ երբէք: Անիկա դժանօրէն արհամարհեց սահմակող ֆուզը, գրական դժպի «գիւտը»: Ու միշտ գրեց երբ որ բան մը ունէր ըսելու, եւ ըսելիքը գրեց յստակ, ջղուտ ու վերջնական լեզուով մը որուն սակաւապետ շքեղութիւնը զինքը մեր աշխարհաբար գրականութեան ամենէն հոյակապ արձակագիրը կ'ընէ ապահովաբար: Բաշալեանի արձակին վրայ շատ բան պիտի կրնայի ըսել եթէ ժամանակ ունենայի այս էջերը երկարելու: Այդ տիրական արձակը հայերէն աշխարհաբարին է՛ն գերազանց արտայայտութիւնն է ու պիտի փափաքէի որ շատ կարգացուէր ան՝ գրելու պատրաստուողներէն:

«Ինչ որ սիրեցինք մանաւանդ Բաշալեանի գրականութեան մէջ անոր մտահոգութիւններուն տարօրինապէս

մարդկային, բարձրորէն շինելու անուակահորէն օգտապաշտ հանգամանքն էր: Այդ գերազանցօրէն արուեստագէտ գրականութիւնը միեւնոյն ասեմն գերազանցօրէն սխալադաստիկ գրականութիւն մըն է: Ու ուսանայերը — որոնք արուեստը չունենալու դասապարտուած ըլլալ կը թուին — քիչ մը նուազ պիտի ընէին մեզի՝ մեր գրականութեան մէջ ձգտուի պակասին խառնուի մեղադրանքը եթէ կարգացած ըլլային Բաշալեանի արուեստով ու յղացումով այնքան ներուժ ու կեանքով ու մտածումով այնքան զեղուն էջերը:

«Արտասահմանի մէջ՝ Պօլսոյ գրաքննութեան այլանշարակ ու խափանիչ ճնշումէն ազատագրուած՝ իր փառաւոր կատարելութեանը մէջ երեւան եկաւ Բաշալեանի գրական խորտա ու մաքուր դէմքը: Ապահով եմ որ ամենքդ ալ ինծի պէս անյագօրէն ու ըմբոշխնելով կը կարգաք ազգային հոգեբանութեան այն կարճ ու անհուն էջերը զորս Զարթուածեան կը ստորագրէ եւ ուր իր սրտցաւ ու եղբայրական աւրատախոյզի հոգին, իր խռովքի ու կարեկցութեան, գառնացումի ու անձկութեան, կսկիծի ու ակնկալութեան սարսուղին հոգին կը ծռէ ազգային ցաւերուն, կեղտերուն ու տենջանքներուն վրայ:»

«Գրական ճիշտանքիզը չէ՛ կեղծած այդ սքանչելի տաղանդը: Բաշալեան իր գրականութեան մէջ ալ մարդ մըն է մանաւանդ ու Հայ մը: — Ու անաւասի՛կ ինչու համար նոր սերունդին գրական երիտասարդութիւնը — որ միջակութիւններու ու ոչնչութիւններու հանդէպ իր ժխտական մոլեգնութենէն աւելի բուռն ու սրտեռանդ խանդավառութիւն մը կը տածէ գեղեցկութեան իրականացումներու հետապնդող բոլոր ճշմարիտ ու արժանաւոր ճիւղերուն — կ'ողջունէ Բաշալեանին մէջ՝ վերջին տասը տարիներու մեր աշխարհաբար գրականութեան անժխտելիօրէն մեծագոյն վարպետը:

ջերը Ա. Զօպանեանի նախագահութեան տակ կարգացած ըլլամ: Պարզապէս կը սխալիք: Ու Ա. Զօպանեան աներեսաբար կը խաբէ ձեզի եւ թաղբել տալով թէ «Բաշալեան երեկոյթին» նախագահը եղած է սկիզբէն մինչեւ վերջը: Ա. Զօպանեանի նախագահութիւնը կ'աւարտէր — արգէն այս պայմանով միայն յանձն առած էի մասնակցել այդ երեկոյթին — իր թոթոված քանի մը հանդիսաւորօրէն անխմաստ բառերէն ու Բաշալեանի փողոյթէն անմիջապէս վերջը: Քառորդ ժամու մը դադարի միջոցին որ կը յաջորդէր երեկոյթին այդ առաջին մասին արժանապատուութեան տարական զգացում մը պիտի թելադրէր վայելչահասակ նախագահին ժողովասրահէն հեռանալ, մանաւանդ որ «ապահով էր» — ինչպէս չամչնար խոստովանելու — «թէ անկարող պիտի ըլլայի ինքզինքիս արգիլել իր մասին մէկ քանի տարածմ ակնարկութիւններ սահեցնելէ»: Բայց չ'է, Ա. Զօպանեան, նախագահի աթոռէն ելլալէն ետքը չկրցաւ ձգել հանդիսավայրը: Վատառողջ հետաքրքրութիւն մը կը շղթայէր զինքը հոտ, ու գնաց իր բարեկամներէն է՛ն խելացիին քով տեղաւորուիլ զողահար: Ու կ'երեւայ թէ ներկաները քսան վայրկեան հանդիսատես եւ եղեր լուռ բայց է՛ն կսկծազին տուամին զոր երբէք խաղացած ըլլան երկուշուրած, միջցած աչքեր մարդային երեսի մը փոթորկոտ ու բիւրերանդ անձկութեանը վրայ:

Ա. Զօպանեան չի ներեր Բաշալեանին բանաստեղծութենէս վերջը պահած «հերմասայան լուսութիւնը»: Ասիկա չի զարմացներ զիս իր կողմէն: Անշուշտ կը սպասէր հոգեւին որ Բաշալեան ելլայ քանի մը խօսքով ժխտէ իմ ըսածներս: Բայց Բաշալեան չուզեց ու չէր կրնար այդ բիս գործին մարդը ըլլալ: Ընդհակառակը, Բաշալեան, երեկոյթէն կէս ժամ վերջը, պուլվառին վրայ ինծի հանդիպելով, ձեռքս սեղմեց ու շնորհակալութիւն յայտնեց ինծի խոգուած ու գորովալից բառերով զորս հանրածանօթ համեստութիւն մը կ'արգիլէ զիս կրկնել հոս:

Բարիկ, Հոկտեմբեր, 1900

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Գուցէ գեռ կը շարունակէք կարծել որ այս քանի մը է-

Յ. Գ. — Գիտեմ որ այս էջերուն ընթերցումը լքումի ու անձկութեան դժխեմ սարսուռով մը փուշ փուշ պիտի ընէ նորէն Ս. Զօպանեանի հոգին ու մարմինը, ու այդ խեղճ մինակ իր ցաւապար երազներուն, իր «ոսկեծղի» ամայացած Անահիսին ու մանաւանդ իր անհամար ջերմեռանդ բարեկամներուն հետ միս միեւնակ տղան՝ անգամ մըն ալ անհունօրէն պիտի մինակ գտնայ ինքզինքը, մինակ ու գարշելի նոյն իսկ անոնց որոնց առաւել կամ նուազ երկրայական գերազանցութիւնը չնչապաւ երգելով կը կարծէր թերեւս մաքրագործութիւլ ու նուիրականանալ ու անշուշտ զգլխիչ յոյսը կը սնուցանէր — ամէն վերջնական ու անյարիր անկումի առջեւ — իր պաշտպանութեանը համար ցկեանս հիացողներու հաւատարիմ խումբ մը ապահովելու: Կ'ըմբռնեմ որ ասիկա դժնգակ բան մը ըլլայ, ու սիրով պիտի ինայէի իրեն այս դերադոյն յուսախարութիւնը: Բայց մեղքը իր վիզը: Վերջապէս ինքը ուզեց որ ասակ ըլլայ: Եւ յետոյ, ես գինքը աղէկ կը ճանչնամ ու գիտեմ որ ի'նչ տարօրինակ, ի'նչ վտեմ սլացքներու կարող է ան ասանկ անդոնական վայրկեաններու մէջ: Ու երբէ'ք չպիտի գարմանամ եթէ վաղը, իր եղեռնականօրէն հաստ ցուցամատը ճակտին տանելով, Տօք. Շթօքմանի «Չուր վերցնող» խօսքը պոռայ ինձի, — «է'ն ուժով մարդը է'ն մինակն է»: Բայց հիտա ա'լ չի բաւեր գուցէ իրեն Իպսէնին միսթարող ձայնը, քանի որ անցածները, խանդավառութեան գահավէժ անպարանքի մը մէջ, սա վիթխարի խօսքը ըրեր էր իմ մէկ բառեկամիս.

— Եթէ ես ազգային գործերով զբաղել ստիպուած(?) չըլլայի, եթէ ես հանգիստ ասրեքու միջոցներ ունենայի... Իպսէնին պէս տաամներ կը գրէի!!!...

Ասանկ տիպար մը կը կարծէ՞ք որ երբէք ընկճուի: Ամէն պարագայի մէջ իր գիտնալիք բանն է: Եթէ ստիպել գիտնորէն իրմով զբաղել թող վստահ ըլլայ որ միշտ առիթ պիտի տայ ինձի ճիշտ ու օգտակար բաներ ըսելու մեր հաշտարակութեան: Ու թերեւս այսպէսով բանի մը ծառայած պիտի ըլլայ իր անսխալ կեանքին մէջ:

Ս. Գ.

Երբ ընթերցումը լքումի ու անձկութեան դժխեմ սարսուռով մը փուշ փուշ պիտի ընէ նորէն Ս. Զօպանեանի հոգին ու մարմինը, ու այդ խեղճ մինակ իր ցաւապար երազներուն, իր «ոսկեծղի» ամայացած Անահիսին ու մանաւանդ իր անհամար ջերմեռանդ բարեկամներուն հետ միս միեւնակ տղան՝ անգամ մըն ալ անհունօրէն պիտի մինակ գտնայ ինքզինքը, մինակ ու գարշելի նոյն իսկ անոնց որոնց առաւել կամ նուազ երկրայական գերազանցութիւնը չնչապաւ երգելով կը կարծէր թերեւս մաքրագործութիւլ ու նուիրականանալ ու անշուշտ զգլխիչ յոյսը կը սնուցանէր — ամէն վերջնական ու անյարիր անկումի առջեւ — իր պաշտպանութեանը համար ցկեանս հիացողներու հաւատարիմ խումբ մը ապահովելու: Կ'ըմբռնեմ որ ասիկա դժնգակ բան մը ըլլայ, ու սիրով պիտի ինայէի իրեն այս դերադոյն յուսախարութիւնը: Բայց մեղքը իր վիզը: Վերջապէս ինքը ուզեց որ ասակ ըլլայ: Եւ յետոյ, ես գինքը աղէկ կը ճանչնամ ու գիտեմ որ ի'նչ տարօրինակ, ի'նչ վտեմ սլացքներու կարող է ան ասանկ անդոնական վայրկեաններու մէջ: Ու երբէ'ք չպիտի գարմանամ եթէ վաղը, իր եղեռնականօրէն հաստ ցուցամատը ճակտին տանելով, Տօք. Շթօքմանի «Չուր վերցնող» խօսքը պոռայ ինձի, — «է'ն ուժով մարդը է'ն մինակն է»: Բայց հիտա ա'լ չի բաւեր գուցէ իրեն Իպսէնին միսթարող ձայնը, քանի որ անցածները, խանդավառութեան գահավէժ անպարանքի մը մէջ, սա վիթխարի խօսքը ըրեր էր իմ մէկ բառեկամիս.

Այս բնգնանուր տիպարին ասկ թամբիլներու չարք մըն է գար պիտի հրատարակեմ, պատշաւի ձեւով:

ԽՍ.ԲԱ.ԶԱՆԻ երկրորդ պրակը պիտի երեւայ անմիջապէս՝ երբ այս պրակին արդիւնքը (?) ու իմ անձնական միջոցներս բաւեն ապագայութեան ծախքերուն:

Ս. Գ.

ԽՍ.ԲԱ.ԶԱՆԻ այս պրակը կ'արժէ 1 ֆրանք: Ունենալ փոխարոյնները գիմելու են հետեւեալ հասցէին՝

Sourène Bartévian
137, Boulevard St-Michel
PARIS

« Հանդարտակ » ի Տպարակ — Imprimerie « Hamalsaran »
4, Rue Ortolan, 4



